

ՍԱՂՄՈՍ 119

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՋ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Խորհրդածություն և աղոթք Աստծո Օրենքի շուրջ <u>MT նախաբան</u>	Աստծո Խոսքի գերազանցությունների շուրջ խորհրդածություն	Աստծո Օրենքի շուրջ խորհրդածություն	ՏԻՐՈՉ Օրենքը	Աստվածային Օրենքի փառաբանություն
119:1-8 (Աղևֆ)	119:1-8	119:1-8	119:1-8 Հնազանդություն ՏԻՐՈՉ Օրենքին	119:1-8
119:9-16 (Բեղթ)	119:9-16	119:9-16	119:9-16 ՏԻՐՈՉ Օրենքի մեջ ուրախություն	119:9-16
119:17-24 (Գիւնկ)	119:17-24	119:17-24	119:17-24 ՏԻՐՈՉ Օրենքին հնազանդության որոշում	119:17-24
119:25-32 (Գալեթ)	119:25-32	119:25-32	119:25-32 Հասկացողության աղոթք	119:25-32
119:33-40 (Հե)	119:33-40	119:33-40	119:33-40 ՏԻՐՈՉ Օրենքի վստահություն	119:33-40
119:41-48 (Կալ)	119:41-48	119:41-48	119:41-48 ՏԻՐՈՉ Օրենքի վրա ապավինություն	119:41-48
119:49-56 (Չալին)	119:49-56	119:49-56	119:49-56 ՏԻՐՈՉ Օրենքին նվիրում	119:49-56
119:57-64 (Խեթ)	119:57-64	119:57-64	119:57-64 ՏԻՐՈՉ Օրենքի արժեքը	119:57-64
119:65-72 (Թեթ)	119:65-72	119:65-72	119:65-72 ՏԻՐՈՉ Օրենքի արդարությունը	119:65-72
119:73-80 (Եող)	119:73-80	119:73-80	119:73-80	119:73-80

119:81-88 (Քաֆ)	119:81-88	119:81-88	Ազատության աղոթք 119:81-88	119:81-88
119:89-96 (Լամեր)	119:89-96	119:89-96	ՏԻՐՈՉ Օրենքի հանդեպ հավատք 119:89-96	119:89-96
119:97-104 (Մեմ)	119:97-104	119:97-104	ՏԻՐՈՉ Օրենքի հանդեպ սեր 119:97-104	119:97-104
119:105-112 (Նոն)	119:105-112	119:105-112	ՏԻՐՈՉ Օրենքից լույսը 119:105-112	119:105-112
119:113-120 (Մամեխ)	119:113-120	119:113-120	ՏԻՐՈՉ Օրենքի մեջ ապահովությունը 119:113-120	119:113-120
119:121-128 (Ային)	119:121-128	119:121-128	Հնազանդություն ՏԻՐՈՉ Օրենքին 119:121-128	119:121-128
119:129-136 (Փե)	119:129-136	119:129-136	ՏԻՐՈՉ Օրենքին հնազանդվելու ցանկություն 119:129-136	119:129-136
119:137-144 (Յադե)	119:137-144	119:137-144	ՏԻՐՈՉ Օրենքի արդարությունը 119:137-144	119:137-144
119:145-152 (Քոֆ)	119:145-152	119:145-152	Ազատության աղոթք 119:145-152	119:145-152
119:153-160 (Բեշ)	119:153-160	119:153-160	Օգնության աղերս 119:153-160	119:153-160
119:161-168 (Շին)	119:161-168	119:161-168	Նվիրում ՏԻՐՈՉ Օրենքին 119:161-168	119:161-168
119:169-176 (Թալ)	119:169-176	119:169-176	Օգնության աղոթք 119:169-176	119:169-176

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

ԼՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

ՀԱՄԱՏԵՔՍԱՑՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բացման խոսք

Որպես մեկը, որ սիրում է Աստվածաշունչը և իր կյանքը անց է կացրել այն ուսումնասիրելով, այս Սաղմոսը յուրահատուկ գանձ է (ինչպես Սաղմոս 19): Աստվածաշունչը Աստծո գրված Խոսքը, թույլ է տվել ինձ ճանաչել Աստծո Կենդանի Խոսքին՝ Հիսուսին (տես՝ Հովհ. 1:1-14, Փիլ. 2:6-11, Կող. 1:13-16, Եբր. 1:2-3): Սուրբ Հոգու լուսավորումը ինձ թույլ է տվել անելու այն ինչ արել է Եզրասը (Եզրաս 7:10): Սաղմոս 119-ը իսկապես եղել է՝

Ա. օրհնություն, Սաղմ. 119:1

Բ. հավատքի ապրելակերպ, Սաղմ. 119:1-2

Գ. լույս իմ ոտքերին և ճրագ իմ ճանապարհին, Սաղմ. 119:105

Ես մեծ ուրախությամբ, խաղաղությամբ և հույսով ձեզ եմ հանձնում այն, որ այն արդյունավետորեն ձեր մեջ կառաջացնի՝

Դ. ցանկություն Աստվածաշունչը ուսումնասիրելու

Ե. ցանկություն Աստվածաշունչը ապրելու

2. ավելի խորը անձնական փոխհարաբերություն Եռամեկ Աստծո հետ

Եվս մեկ բացատրություն, թե ինչ մոտեցում եմ ցուցաբերում այս երկարուձիգ Սաղմոսին: Այն այնքան երկար է և կրկնվող, որ ես որոշեցի գործ ունենանլ յուրաքանչյուր տան հետ (այսինքն՝ երբայերենի յուրաքանչյուր տառի տաղի հետ): Ես փորձեցի աշխատել յուրաքանչյուր բաժնի յուրահատկության հետ և չանել ընդհանուր ամփոփում:

2. Պատմական միջավայրը

Ա. Արարերեն թարգմանությունը նշում է Դավթին որպես հեղինակ:

Բ. Դավուդ, *Խոսքիս Աստվածաշնչյան Մեկնաբանությունը*, պնդում է, որ միացյալ միապետության (Մավուդից - Սողոմոն) տարեթիվը շատ հավանական է: Նա գալիս է այս եզրահանազմանը՝

1. համեմատելով այս Սաղմոսը Մեռյալ Ծովի Գալարներում գտնվող թարգմանության հետ և

2. այս Սաղմոսը պարունակում է շատ հետ-գերության շրջանի տարրեր

Գ. Լեոպոլդը դիտարկում է պատմական միջավայրը որպես հետ-գերության շրջանի (Եզրաս, Նեեմիա, Անգե, Սաղաբիա): Նա հիմնավորում է սա՝

1. Սաղմոսներում շատ հաճախ նշվող վերահաստատմանը և հալածանքներին վերաբերող խնդիրների վրա

2. գոհաբերության համակարգի մասին նշումների բացակայությունը պատճառ է հանդիսացել նրան հավատալու, որ տաճարի և դրա ծեսերի բացակայությունը՝ Աստվածաշնչի

Սերտոդությունների ավելացման հետ միասին, ավելի շատ է համապատասխանում վաղ հետ-գերության շրջանին:

Գ. Այս Սաղմոսի առիթը ուրախությունն է (տես՝ Սաղմ. 119:14, 16, 24, 35, 47, 70, 77, 92, 111, 143, 162, 174) և հավանությունների մեջ Աստծո ու Նրա հայտնված ճշմարտության վրա վստահությունը: Այս գիտությունը բերում է խաղաղություն և հաստատություն:

3. Գրական տարրերը

Ա. Սա, ինչպես Սամոսներ 9-10, 25, 34, 37, 111, 112 և 145, ակրոստիկոս է՝ հիմնված Եբրայերենի այբուբենի քսաներկու տառերի վրա: Այս նույն ձևաչափը կարելի է գտնել Առակաց 31:10-31-ում և Ողբ Երեմիայի առաջին չորս գլուխներում: Սա Աստվածաշնչում առկա ամենատեսակար և մանրակրկիտ կերպով ձևավորված ակրոստիկոսն է: Յուրաքանչյուր եբրայերեն տառը պարունակում է ութ համար:

Բ. Այս Սաղմոսի յուրաքանչյուր համարում կա պարբերաբար կրկնվող թեմա, որը կապված է մարդկությանն ուղղված Աստծո ուսմունքների հետ: Հեղինակը գործածում է մի քանի հոմանիշներ Օրենքի համար (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐ, տես՝ Սաղմ. 19:7-9):

1. Օրենքը – կիրառված է 25 անգամ
2. վկայությունները – 23 անգամ
3. հրամանները – 21 անգամ
4. կանոնները – 20 անգամ
5. պատվիրանները – 22 անգամ
6. դատաստանները – 23 անգամ
7. Խոսքը – 24 անգամ
8. խոսքերը – 19 անգամ
9. ճանապարհը – 13 անգամ
10. ճշմարտությունը կամ հավատարմությունը – 14 անգամ
11. արդարությունը – 14 անգամ

Գ. Բիմչիի (այսինքն՝ Հրեա մեկնաբանի, Մ.Թ. 1160-1235) կիրառած սահմանումները մարդուն Աստծո հայտնության համար՝

1. Օրենքը – «պարտականությունների շարք և դրանք կատարելու կերպերը»
2. վկայությունները – «հրահանգներ, որոնք վկայության կամ ֆեդերալ հաղորդակցության համար են»
3. հրամանները – կիրառվող «հրամաններ, որոնք սովորեցնում են բանականությանը, որոնք ասես ավանդված են մեր բնության մեջ»
4. կանոնները – «հրամաններ, որոնց բանականությունը անհայտ է»
5. դատաստաններ – «դատաստաններ, որոնք կատարվում են մարդու և իր հարևանի միջև»
6. ճանապարհը – «ճանապարհը այն կանոնն է, որի վրա հիմնավորված է Սուրբ Գիրքը»

Դ. Աստծո հայտնությունը և Աստծո անձը խաչվում են այս Սաղմոսում: Աստծո հայտնությունը ճանաչել նշանակում է ճանաչել Նրան: Աստծո հայտնությանը հարել նշանակում է հարել Նրան (այսինքն՝ համեմատեք Սաղմ. 119:31 և 2 Օրինաց 10:20-ի հետ):

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 119:1-8 (Այլևժ)

¹Երանի՛ նրանց, որ անբիծ ընթացք ունեն,

Որոնք ՏԻՐՈՋ Օրենքի մեջ են քայլում:

²Երանի՛ նրանց, որ պահում են Նրա վկայություններն

Ու ամբողջ սրտով փնտրում են Նրան:

³Եվ անօրենություններ չեն անում,

Այլ Նրա ճանապարհով են քայլում:

⁴Դու հրամայեցիր, որ զգուշությամբ

Քո պատվիրանները պահենք:

⁵Երանի՛ թե իմ ճամփաները ուղղվեն Քո կանոնները պահելով:

⁶Այն ժամանակ չեմ ամաչի,

Երբ ակնածանքով մոտենամ Քո բոլոր պատվիրաններին:

⁷Գոհություն եմ մատուցելու Քեզ ուղիղ սրտով,

Երբ սովորեմ Քո արդար դատաստանները:

⁸Ես պիտի պահեմ Քո կանոնները .

Ինձ մեկընդմիշտ մի՛ լքիր:

119:1 Այս պարբերությունը նկարագրում է «երանելին» (BDB 80, տես՝ Սաղմ. 1:1, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ /ՀԿ/):

1. նրանց, ում ճանապարհը (այսինքն՝ ապրելակերպը) անբիծ է (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՆԲԻԾ, ԱՆԱՐԱՏ, ԱՆՀԱՆՑԱՆՔ, ԱՌԱՆՑ ՆԱԽԱՏԻՆՔ), Սաղմոս 119:1ա:
2. նրանք, ովքեր քայլում են ՏԻՐՈՋ օրենքի մեջ – մեկ այլ կերպ, որը խոսում է հնազանդ ապրելակերպի մասին, Սաղմ. 119:1բ, 3բ
3. նրանց, որ պահում են Նրա վկայությունները, Սաղմ. 119:2ա
4. նրանց, որ ամբողջ սրտով փնտրում են Նրան, Սաղմ. 119:2բ (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԻՐՏԸ), տես՝ Սաղմ. 9:10 (և փնտրում են Նրա օրենքը, Սաղմ. 119:45,94,155):
5. նրանք անօրենություններ չեն անում, Սաղմ. 119:3ա
6. նրանք պահում են Աստծո ուխտը, Սաղմ. 119:4բ, 5բ, 8բ
7. նրանք պահում են Նրա կանոնները, Սաղմ. 119:8ա

Ուշադրություն դարձրե՛ք, Աստծո հայտնությունը ճանաչելու և ապա, այն կատարելու վրա դրված շեշտադրությանը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՀԵԼ

❖ Մի քանի տերմիններ, որոնք նկարագրում են Աստծո հայտնությունը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԿԱՐԱԳՐՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐ)

1. օրենք (BDB 435), Սաղմ. 119:1բ
2. վկայություններ (BDB 730), Սաղմ. 119:2ա
3. ճանապարհներ (BDB 202), Սաղմ. 119:3բ, 5ա
4. կանոններ (BDB 824), Սաղմ. 119:4ա
5. հրահանգներ (BDB 349), Սաղմ. 119:5բ, 8ա
6. պատվիրաններ (BDB 846), Սաղմ. 119:6բ
7. դատաստաններ (BDB 1048), Սաղմ. 119:7բ

Նաև, յուրաքանչյուր համար այս երկար ակրոստիկոս Սաղմոսում նշում է սրանցից որևէ մեկը (կամ մի քանի ուրիշները նույնպես, ինչպես օրինակ «խոսքը» Սաղմ. 119:9,11,16 կամ «հրամանները», Սաղմ. 119:13,30,39,43,52,62,75,84,102,106,120,137,147,149,156,160,164,175):

119:2 «պահում են» Սա աստվածահաճո կյանքի բանալի առանձնահատկություններից է: Այն կիրառվում է՝

1. պահել կանոնները – Սաղմ. 119:2,22,129
2. պահել օրենքները – Սաղմ. 119:33,34,145
3. պահել հրահանգները – Սաղմ. 119:56,69,100
4. պահել հրամանները – Սաղմ. 119:115
5. պահել օրենքը – Սաղմ. 119:34

❖ «իրենց ամբողջ սրտով» Կատարյալ նվիրումը կենսական նշանակություն ունի (տես՝ 2 Օրինաց 4:29, 6:5, 10:12, 11:13, 13:3, 30:2): Սա դառնում է ՅԱՀՎԵԻՆ և Նրա կամքին ամբողջական հնազանդության համար դարձվածք: Դավիթն ուներ այսպիսի սիրտ, ինչպես նաև Սողոմոնը՝ մինչև իր խոր ծերությունը: Նվիրումը մարդու կյանքի ինչ-որ մի պահի բավական չէ: Դավիթը մեղանչեց, սակայն զոջաց: Փոխհարաբերությունը պահպանելն է առանցքային, ոչ թե անմեղությունը (տես՝ 1 Հովհ. 1:9):

119:6 «չեմ ամաշի» ՀՄԱ-ում «ամոթ» բառն ուներ՝

1. ներքին կողմ – հանրորեն նվաստանալու, ընտանիքի և ընկերների կողմից մերժված լինելու, հեղինակությունը կորցնելու ամոթի զգացողությունները
2. արտաքին կողմը – աղքատ, անզոր լինելը
3. հոգևոր կողմը – ՅԱՀՎԵԻՆ կողմից մերժված լինելը, տես՝ Սաղմ. 25:20, 31:1, 71:1, 119:6, 31, 46, 80,

Հաճախ Սաղմոսները խնդրում են Աստծուն թշնամիներին «ամոթահար» թողնել (տես՝ Սաղմ. 35:4, 70:2, 71:13, 86:17, 119:78, նաև ուշադրություն դարձրեք՝ Մատթ. 10:33, Մարկ. 8:38, Դուկ. 12:9):

119:8 «Ինձ մեկընդմիջտ մի՛ լքիր» Այս ԲԱՅԸ (BDB 736, KB 806, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով) կրկնվող աղաղակ է ՅԱՀՎԵԻՆ (տես՝ Սաղմ. 38:21, 71:9, 18): Հեռու մի՛ մնա կամ մի՛ թող ինձ իմ իսկ հնարավորությունների հույսին:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 119:9-16 (Բեթ)

⁹Երիտասարդն ինչո՞վ մաքրի իր ճամփան .

Քո խոսքի համեմատ *դրան* զգուշությամբ մոտենալով:

¹⁰Իմ ամբողջ սրտով Քեզ փնտրեցի, ինձ մի՛ թույլ տա,

Որ Քո պատվիրաններից շողվեմ:

¹¹Քո խոսքերն իմ սրտում թաքցրի,

Որպեսզի չմեղանչեմ Քո դեմ:

¹²Օրինյալ ես Դու, ո՞վ ՏԵՐ,

Սովորեցրո՛ւ ինձ Քո կանոնները:

¹³Իմ շրթունքներով պատմեցի

Բերանիդ բոլոր դատաստանները:

¹⁴Քո վկայությունների ճամփով ուրախացա,

Ինչպես ամենայն հարստությունով:

¹⁵Քո կանոնների մասին եմ խորհրդածելու,

Եվ հետևելու եմ Քո ճանապարհներին:

¹⁶Քո հրամաններով եմ ուրախանալու ու Քո խոսքը չեմ մոռանալու:

119:9 «երիտասարդն» Սաղմոս 119-ի հեղինակը հաճախ արտահայտում է «երիտասարդ» հետևորդների իրենց աստվածահաճո ապրելակերպը պահպանելու կարիք՝ անհրաժեշտությունը:

Մաքուր ճանապարհը սահմանվում է որպես Աստծո հայտնությունը (այսինքն՝ խոսքը) պահելը: Սա պահանջում է մշտական «հսկում» (BDB 1036, KB 1581):

119:10 «Իմ ամբողջ սրտով» Տես՝ Սաղմ. 119:2բ-ի գրառումը:

❖ «**Քեզ փնտրեցի**» Այս ԲԱՅԸ (BDB 205, KB 233) հաճախ է այս Սաղմոսում կիրառվում (տես՝ Սաղմ. 119:2, 10, 45, 94, 155): Այն մատնանշում է աղոթքի, սերտողության և երկրպագության ջերմեռանդ՝ ակտիվ կյանք:

❖ «**շողվեմ**» Այս ԲԱՅԸ (BDB 993, KB 1413, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով) կարելի է գտնել բացասական ձևակերպմամբ Սաղմ. 119:21, 118: Սաղմոսներում այն միայն երեք անգամ է կիրառվում, սակայն Առակացում վեց անգամ: Այն կիրառվում է «զգիտակցված մեղքերի»

համար Ղևտ. 4:13, Թվոց 15:22-ում: Չգուշացե՛ք «այն բանից», որը պատճառ է հանդիսանում, որ հավատարիմ հետևորդներն իրենց աչքերը հստակ նշված ՅԱՀՎԵԻ ճանապարհից հեռացնեն:

119:11 «Քո խոսքերն իմ սրտում թաքցրի» Այս արտահայտությունը կիրառվում է Մարիամի հրեշտակի պատգամին տրված պատասխանի մեջ (տես՝ Ղուկ. 2:19,51): Աստծո խոսքը չափազանց արժեքավոր է (տես՝ Սաղմոս 19:10, 119:14բ): Քո Աստվածաշունչը թա՛նկ է քո համար: Արդյո՞ք կարդում, ուսումնասիրում, և կատարում ես այն, ու սովորեցնում ուրիշներին (տես՝ Եզրաս 7:10):

Այս ԲԱՅԸ (BDB 860, KB 1049, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) բառացի «թաքցնել» է և Աստծո խոսքը անզիր անելու համար օգտագործվող դարձվածք է (տես՝ Հոբ 23:12, Առակ .2:1, 7:1):

119:12 «սովորեցրո՛ւ ինձ» Սա *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է (BDB 540, KB 531): Այն հաճախ է կիրառվում Սաղմոս 119-ում (տես՝ 119:7,12,26,64,66,68,71,73,99,108,124,135,171): Ճշմարտությունը չի գալիս մարդկային ջանքերի միջոցով, այլ՝

1. Աստծո Հոգով
2. Աստծո հայտնությամբ
3. Աստծուն անձնական նվիրումով
4. ջերմեռանդ սերտողության միջոցով
5. անձնական կիրառության միջոցով

119:13 Բանաստեղծական այս տողը ենթադրում է տանարում երկրպագության միջավայր:

119:14 Հավատարիմ հետևորդի համար Աստծո հայտնությունները ամենաթանկն են այս երկրի վրա (տես՝ Սաղմ. 19:10, 119:72, 127, Առակ .8:10,11,19):

119:15 Այս համարն ունի երկու ԸՂՁԱԿԱՆ՝

1. խորհրդածել – BDB 967, KB 1319, *Qal*, տես՝ Սաղմ. 119:23,27,48 (երկու անգամ), 78, 148: Աստծո խոսքի վրա խորհրդածությամբ է սկսում Սաղմոսների գիրքը (տես՝ Սաղմ. 1:2): Այս խորհրդածությունը լուսաբանվում է 2 Օրինաց 6:6-9-ում:
2. հետևել – BDB 613, Kb 661, *Hiphil*, տես՝ Սաղմ. 119:6,15,18

Այս երկուսը ենթադրում են Աստծո Խոսքի ջերմեռանդ ուսումնասիրություն: Դրա համար ժամանակ է պահանջվում, ջանք, նվիրում և ծրագրավորում: Տես՝ Աստվածաշնչ Մեկնաբանության Սեմինարը առցանց՝ www.freebiblecommentary.org

119:16 «ուրախանալու եմ» BDB 1044, KB 1613, *Hithpalel* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 119:24, 35, 47, 70, 77, 92, 143, 174:

❖ «չեմ մոռանալու» BDB 1031, KB 1489, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, ժխտված, տես՝ Սաղմ. 119:61, 83, 93, 109, 141, 153, 176 (Սաղմոս 119-ի վերջին տողը):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 119:17-24 (Գիմել)

¹⁷Բարության՝ վարվիր Քո ծառայի հետ,

Որպեսզի ապրեմ ու Քո խոսքը պահեմ:

¹⁸Բա՛ց իմ աչքերը, որպեսզի Քո Օրենքի հրաշալիքները տեսնեմ:

¹⁹Պանդուխտ եմ ես երկրի վրա:

Մի՛ ծածկիր ինձնից Քո պատվիրանները:

²⁰Իմ անձը մաշվում է մշտապես

Քո դատաստանները ցանկանալուց:

²¹Դու սաստեցիր հպարտներին,

Անիծյալ *են* նրանք, ովքեր շեղվեցին Քո պատվիրաններից,

²²Նախատինքն ու անարգանքը վերցրո՛ւ իմ վրայից,

Քանի որ Քո վկայությունները պահեցի:

**²³Իշխաններն էլ նստում ու իմ դեմ էին խոսում,
Բայց Քո ծառան Քո կանոնների մասին էր խորհրդածում:
²⁴Հիրավի, Քո վկայություններն իմ ուրախությունն
Ու իմ խորհրդատուներն են:**

119:17 Ուշադրություն դարձրե՛ք, որ սաղմոսերգուն խնդրում է Աստծո օրհնությունը (այսինքն՝ «բարությանը վարվիր», BDB 168, KB 197, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) օգնելու իրեն ավելի լավ «ծառա՝ սպասավոր» լինելու (BDB 713):

1. որպեսզի ապրեն – BDB 310, KB 309, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂԶԱԿԱՆ իմաստով
2. որպեսզի Քո խոսքը պահեն – BDB 1036, KB 1581, *Qal* ԸՂԶԱԿԱՆ

Օրհնությունները անձնական կամ հարմարավետության նպատակով չեն, այլ երկրի վրա Աստծո գործը զորացնելու, խորացնելու և տարածելու համար:

❖ «**Քո խոսքը**» Տես՝ Սաղմ. 119:1-ի գրառումը և ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈՒ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐ

119:18 Այս նույն աշխարհայացքը, որ Աստված պետք է Իր ծառաներին զորացնի, արտահայտվում է այս համարում: Մարդը չի կարող տեսնել (բառացի՝ «բացահայտել», BDB 162, KB 161, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) կամ հասկանալ Աստծո կամքը և ճանապարհները առանց Նրա օգնության:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ

❖ «**հրաշալիքներ**» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԲԱՆՉԵԼԻ ԲԱՆԵՐ

❖ «**Քո օրենքը**» Տես՝ Սաղմ. 119:1-ի գրառումը:

119:19 «Պանդուխտ եմ ես երկրի վրա» Սա հավատարիմ հետևորդի աշխարհայացքն է: Ծննդոց 3-ի Անկումը այս մոլորակը փոխակերպեց պանդուխտության և ուխտագնացության վայրի (տես՝ 1 Մնաց. 29:15, Սաղմ. 119:54, Եբր. 11:13-16): Մենք փափագում ենք մեր Արարչի հետ խորը փոխհարաբերություն՝ մի բան, որի համար ստեղծվել ենք (տես՝ Ծննդ. 1:26,27, 3:8): Այս աշխարհը այլևս մեր տունը չէ:

«Օտարականի/պանդուխտի» փոխաբերությունը (BDB 158) բխում է ՅԱՀՎԵԻ կողմից Աբրահամին իր սերնուղների համար տրված խոսքից, որ նրանք պանդուխտներ են լինելու Եգիպտոսում (տես՝ Ծննդ. 15:13): Աբրահամն իրեն այս տերմինով է կոչում Ծննդ. 23:4-ում: Այն դառնում է Ելից 2:22-ում Մովսեսի որդիներից մեկի անունը: Իսրայելացիներից պահանջվում էր արդարությամբ և ողորմությամբ վարվել «օտարականների, պանդուխտների» հետ, քանի որ մի ժամանակ իրենք էին նույն վիճակում (տես՝ Ելից 23:9): Աբրահամի համար ասվում է, որ փնտրում էր Աստծո քաղաքը (տես՝ Եբր. 11:10): Սա ցույց է տալիս այս կյանքից հետոն: ՅԱՀՎԵՆ ուզում է հավիտենությունը կիսվել Իր հավատարիմ հետևորդների հետ:

❖ «**Մի՛ ծածկիր ինձնից Քո պատվիրանները**» Մեղքը հոգևոր կուրության պատճառ եղավ (1 Կորնթ. 13:12): Աստվածաշունչը երկու տեսակ հոգևոր կուրություն է ճանաչում՝

1. Աստծուց հարուցված (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈՒՑ ԽՍԱԿՑԱԾ)
2. ինքնահարուցված (այսինքն՝ Հովհաննես 9:13-41):

119:20 Ճշմարիտ հավատարիմ հետևորդը փնտրում է Աստծուն և Նրա Խոսքը միամիտ ջերմեռանդությամբ:

«Մաշվել» ԲԱՅԸ (BDB 1060) միայն այստեղ է հանդիպում:

❖ «անձր» «Անձր» փափագում է ՅԱՀՎԵԻՆ (տես՝ Սաղմ. 42:2, 63:2, 119:81, 143:6): *Nepshesh* (BDB 659) տերմինի շուրջ քննարկման համար տես Ծննդ. 35:18-ի առցանց գրառումը՝ www.freebiblecommentary.org

119:21 Անհավատները բնութագրվում են որպես՝

1. ամբարտավան (այսինքն՝ նրանք, ովքեր գիտեն, սակայն ընտրում են ապստամբել) – BDB 267, տես՝ Սաղմ. 86:14, 119:51, 69, 78, 85, 122
2. անիծվածներ – BDB 76, KB 91
3. ովքեր շեղվել են Աստծո պատվիրանից – BDB 993, KB 1413

119:22 «նախատինքն ու անարգանքը վերցրու» ԲԱՅԸ (բառացի՝ «հեռացրու», BDB 164, KB 193, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) ներման աղոթք է:

1. նախատինքն - BDB 357, տես՝ Սաղմ. 69:19, 20
2. անարգանք – BDB 100 II, տես՝ Սաղմ. 123:3-4

Պատճառը, թե ինչու պետք է Աստված ների, քանի որ սաղմոսերգուն պահում է Նրա հրամանները (այսինքն՝ երկու ճանապարհը, տես՝ 2 Օրինաց 30:15, 19):

Փիտոնականների մեջ որոշակի քննարկումներ են եղել, թե որ երբայերեն արմատից է Սաղմ. 119:22ա-ի ԲԱՅԸ կազմվել:

1. բացել – (բառացի՝ «ճաղատացնել, մերկացնել», ինչ BDB 164 [MT])
2. գլորել – ՆՆ, BDB 164 II Հեսու 5:9, Սաղմ. 22:9-ից

119:23-24 «իշխաններն էլ նստում ու իմ դեմ էին խոսում» «իշխաններ» (BDB 978, տես՝ Սաղմ. 118:9) ենթադրում է՝

1. սաղմոսերգուն հարուստ, իշխանություն ունեցող առաջնորդ էր, հավանաբար թագավորը
2. ազգային առաջնորդության հարցում լարվածություն կար

Սակայն սաղմոսերգուին սպառնացող իրարանցման հետ նա կենտրոնանում է Աստծո հայտնության ճշմարտության և խոստումների վրա: Իրական խաղաղություն և կայունություն կարելի է գտնել միայն Նրա մեջ, ոչ թե իրավիճակների կամ անցողիկ հոշակի, իշխանության, հարստության կամ պաշտոնի մեջ:

Փեշիտտան «իշխանները» (BDB 978, տես՝ Սաղմ. 119:161) թարգմանում է որպես «անաստվածներ» կամ «չար մարդիկ», որը չեղարկում է սաղմոսերգուի որպես առաջնորդ լինելու պաշտոնի ակնարկը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 119:25-32 (Դալեթ)

²⁵Իմ անձր հողին է կաչում,

Կենդանացրո՛ւ ինձ Քո խոսքի համաձայն:

²⁶Իմ ճամփաների մասին պատմեցի,

Ու Դու լսեցիր ինձ. սովորեցրո՛ւ ինձ Քո օրենքները:

²⁷Քո պատվիրանների ուղին ինձ հասկացրու,

Որպեսզի Քո հրաշալի գործերի մասին խոսեմ:

²⁸Իմ անձր հալչում է տրամությունից,

Չորացրու ինձ ըստ Քո խոսքի:

²⁹Կեղծիքի ճամփան հեռացրո՛ւ ինձնից

Ու Քո օրենքը շնորհի՛ր ինձ:

³⁰Ճշմարտության ճամփան եմ ընտրել.

Քո դատաստանները դրել եմ իմ առջև:

³¹Քո վկայություններին եմ հարել, ո՛վ ՏԵՐ,

Ինձ մի՛ ամաչեցրու:

³²Քո պատվիրանների ճանապարհով եմ վազելու,

Քանզի Դու լայնացնելու ես իմ սիրտը:

119:25 Առաջին տողը ներկայացնում է սաղմոսերգուի գոյաբանական միջավայրը (տես՝ Սաղմ. 44:25): Նա գգում է, որ մոտ է մահվանը, լինի դա հիվանդության, թե ապստամբության պատճառով, չի արձանագրվում, սակայն Սաղմ. 119:23 ենթադրում է դատական խարդավանք (չնայած Սաղմոսի ակրոստիկոսային կառուցվածքի պատճառով անհայտ է արդյո՞ք գրական համատեքստը, թե հանգավորումն է հանդիսանում առաջնորդող գործոնը):

Սաղմոսերգուն ունի մի շարք աղոթքի խնդրանքներ՝

1. կենդանացրո՛ւ ինձ Քո խոսքի/գործի համաձայն, Սաղմ. 119:25բ – BDB 310, KB 309, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 119:37,40,88,93,107,149,154,156,159: Այն կարող է նշանակել՝
ա. պահպանել
բ. կենդանացնել
2. սովորեցրու ինձ Քո օրենքները, Սաղմ. 119:26բ – BDB 540, KB 531, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ 119:12,26,64,68,108,124,135,171
3. Քո պատվիրանների ուղին ինձ հասկացրո՛ւ, Սաղմ. 119:27ա – BDB 106, KB 122, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ 119:34,73,125,144,169
4. գորացրո՛ւ ինձ ըստ Քո խոսքի, Սաղմ. 119:28բ – BDB 827, KB 1086, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, BDB առաջարկում է ԲԱՅԸ *Piel*-ով, որը նշանակում է՝
ա. կատարել, Սաղմ. 119:106-ում
բ. հաստատել՝ այստեղ
5. կեղծիքի ճամփան հեռացրու ինձնից, Սաղմ. 119:29ա – BDB 693, KB 747, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ: «Կեղծիքի ճամփան» ուղիղ հակասական է «հավիտենական ճանապարհին»՝ Սաղմ. 139:24-ի:
6. Քո օրենքը շնորհիք ինձ, Սաղմ. 119:29բ – BDB 335, KB 334, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, Աստծո հայտնությունը «հավատարիմ ճանապարհին» է (տես՝ Սաղմ. 119:30):

119:30-32 Ուշադրություն դարձրեք այն մի քանի բաներին, որոնք սաղմոսերգուն կանի, կամ արել է Աստծո ապահովող հասկացողությամբ՝ Նրա հայտնության միջոցով:

1. նա աղոթել է (*Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ), Սաղմ. 119:26ա
2. նա ընտրել է (*Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) հավատարիմ ճանապարհը, Սաղմ. 119:30ա
3. նա դրել է (*Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ) Աստծո հայտնությունը իրենից առաջ (բառացի՝ «Աստծո օրենքները արժանի է համարել»), Սաղմ. 119:30բ
4. նա հարել է (*Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ 119:25) Աստծո հայտնությանը, Սաղմ. 119:31ա (2 Օրինաց 10:20-ում կիրառվում է Աստծուն հարելու համար, այս Սաղմոսում Աստծո անձը և հայտնությունը միաձուլված են)
5. նա վազելու է (*Qal* ԱՆԿԱՏԱՐ) Աստծո հայտնության ճանապարհով, Սաղմ. 119:32ա:

119:32բ «քանզի Դու լայնացնելու ես իմ սիրտը» Աստված ավելացնելու է (բառացի՝ «լայնացնելու», BDB 931, KB 1210, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ) սաղմոսերգուի կարողությունը հասկանալու և գործելու Աստծո այդ գիտությամբ:

«Սրտի» համար տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ ՄԻՐՏԸ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 119:33-40 (ՀԵ)

³³Սովորեցրո՛ւ ինձ, ո՛վ ՏԵՐ, Քո կանոնների ճամփան,

Ու մինչև վերջ պահելու եմ այն:

³⁴Հասկացողությո՛ւն տուր ինձ, որպեսզի Քո օրենքը պահեմ

Ու ամբողջ սրտով այն գործադրեմ:

³⁵Առաջնորդի՛ր ինձ Քո պատվիրանների շավղով,

Քանի որ իմ հաճությն են դրանք:

³⁶Սիրտս հակի՛ր դեպի Քո վկայություններն

Ու ոչ թեմ դեպի ազահություն:

³⁷Ծրջի՛ր աչքերս ունայնություն տեսնելուց

Եվ ինձ Քո ճանապարհի վրա կենդանացրո՛ւ:

³⁸Հաստատի՛ր Քո խոսքը ծառայիդ վրա,

Որ Քո երկյուղն ունի:

³⁹Հեռացրո՛ւ ինձնից իմ նախատինքը, որից վախենում եմ,

Քանի որ Քո դատաստանները բարի են:

⁴⁰Ահա բուռն կերպով Քո հրամաններին փափագեցի

Քո արդարությամբ կենդանացրո՛ւ ինձ:

119:33-40 Այս պարբերությանը բնորոշ են Աստծուն ուղղված խնդրանքները (9 ՀՐԱՄԱՅԱԿԱՆ-ՆԵՐ), որպեսզի Նա խրատի և կարողություն տա սաղմոսերգուին ապրելու այդ խրատներով: Սա նման է *շեմա* ԲԱՅԻՆ (BDB 1033, KB 1570), որը նշանակում է «լսել կատարելու համար»: Աստծո հայտնությունը ավելին է, քան կանոնները կամ օրենքը, այն աստվածահաճո ապրելակերպ է:

«Ճանապարհ» տերմինը շատ հաճախ է կիրառվում Սաղմոսներում, մատնանշում է այս ապրելակերպը, ամենօրյա, կամավոր հնազանդություն: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՀԵԼ: Ուշադրություն դարձրե՛ք, ինչպես է՝

1. սովորեցրու ինձ – ես կպահեմ այն, Սաղմ. 119:34
2. հասկացողություն տուր ինձ – որպեսզի պահեմ, Սաղմ. 119:34

119:35 Քանի որ հավատարիմ հետևորդի հնազանդությունը ձանձրալի կամ օրինապաշտություն չէ, այլ ուրախություն:

119:36-39 Սաղմոսերգուն նշում է երկու բան, որից նա վախենում է, որ իր սիրտը կհեռացնի Աստծուց:

1. անազնիվ շահույթից, Սաղմ. 119:36բ
2. ունայնության նայող աչքերից, Սաղմ. 119:37ա

Նա գգում է, որ չի կարող իրականացնել հոգևոր գործեր առանց Աստծո օգնության:

1. սովորեցրու ինձ, Սաղմ. 119:33 – BDB 434, KB 436, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 25:4, 27:11, 86:11:
2. հասկացողություն տուր ինձ, Սաղմ. 119:34 – BDB 106:KB 122, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. առաջնորդի՛ր ինձ շավղով, Սաղմ. 119:35 – BDB 201, KB 231, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
4. սիրտս հակիր, Սաղմ. 119:36 – BDB 639, KB 692, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
5. շրջիր աչքերս, Սաղմ. 119:37ա – BDB 716, KB 778, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
6. կենդանացրու ինձ, Սաղմ. 119:37բ – BDB 310, KB 309, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
7. հաստատիր Քո խոսքը, Սաղմ. 119:38 – BDB 877, KB 1086, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Սակայն նաև ուշադրություն դարձրեք, որ աստվածային գործողությունները (*Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) պետք է ուղեկցվեն աստվածային ընտրություններով և որոշումներով (ԸՂՋԱԿԱՆՆԵՐԻ և ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐԻ շարքը կիրառված մարդկային գործողությունների համար):

1. ես կպահեմ, Սաղմ. 119:33բ – BDB 665, KB 718, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՋԱԿԱՆ իմաստով:
2. կարողանամ պահել, Սաղմ. 119:34ա – նույնը ինչ #1, սակայն *Qal* ԸՂՋԱԿԱՆ
3. պահել այն, Սաղմ. 119:34բ – BDB 1036, KB 1581, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՋԱԿԱՆ իմաստով
4. իմ հանույքն են դրանք, Սաղմ. 119:35բ – BDB 342, KB 339, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ
5. Քո հրամաններին փափագեցի, Սաղմ. 119:40ա – BDB 1060, KB 1672, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

Դուք տեսնո՞ւմ եք բալանսը: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ, ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԼԱՆՍԻ ԿԱՐԻՔԸ և ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ (ԿԱՎԻՆԻՉՍ) ՀԱԿԱԴՐՎԱԾ ՄԱՐԴՈՒ ԱՉԱՏ ԿԱՄՔԻ ՀԵՏ (ԱՐՄԻՆԻԱՆԻՉՍ):

119:34 «իմ ամբողջ սրտով» Տես Սաղմ. 119:2-ի գրառումը:

119:37 «ունայնություն» Սա կարող է վերաբերել կռապաշտությանը (տես՝ Սաղմ.24:4, 101:3): Սաղմ.119:48 նշում է «ձեռքերը բարձրացնելու» մասին, որը Սաղմ.44:20-21-ում կիրառված է կռապաշտության համար:

❖ **«կենդանացրու»** Սա կրկնվող թեմա է (տես՝ Սաղմ.119:25,37,40,88,93,107,149,154,156,159): ԲԱՅԸ (բառացի՝ «ապրել», BDB 310, KB 309, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, ունի լայն ստուգաբանական դաշտ) «ապրել»-ն է: Միակ «նշմարիտ» կյանքը ՅԱՀՎԵԻ՝ կյանք պարզևողի հետ փոխհարաբերության կյանքն է: Իրական կյանքն ունի երկու բաղադրիչ՝

1. ֆիզիկական կյանք
2. հոգևոր կյանք

119:38 «որ Քո երկյուղն ունի» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՎԱԽ (ՀԿ)

119:39 «Քո դատաստանները բարի են» Ուշադրություն դարձրե՛ք Աստծո հայտնությանը վրագրված առանձնահատկությունները նաև վերագրված են հենց Աստծուն (տես՝ 1 Մնաց. 16:34, Սաղմ.25:8, 34:8, 73:1, 86:5, 100:5, 106:1, 107:1, 118:1,29, 119:68, 135:3, 136:1, 145:9, Երեմ.33:11): Այստեղ «բարի» (BDB373 II) ԱԾԱԿԱՆ է:

Այս Սաղմոսը միայն Աստծո հայտնության մասին չէ, այլ հենց Աստծո:

119:40 «արդարություն» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 119:41-48 (Վալ)

⁴¹Ողորմություններդ թող ինձ վրա գան, ո՛վ ՏԵՐ, Փրկությունդ՝ Քո խոսքի համաձայն:

⁴²Ապա կպատասխանեմ ինձ նախատողին, Քանի որ Քո խոսքին եմ վստահում:

⁴³Ճշմարտության խոսքը երբեք մի՛ հեռացրու իմ բերանից, Քանի որ իմ հույսը Քո դատաստանների վրա է:

⁴⁴Քո օրենքը միշտ պահելու եմ՝ հավիտյանս հավիտենից:

⁴⁵Ազատությամբ եմ քայլելու, Քանի որ Քո օրենքները փնտրեցի:

⁴⁶Քո վկայությունները հայտնելու եմ թագավորների առջև և չեմ ամաչելու:

⁴⁷Ուրախանալու եմ Քո պատվիրաններով, որոնք սիրում եմ:

⁴⁸Ձեռքերս երկարելու եմ դեպի Քո հրամանները, որոնք սիրում եմ, Ու Քո կանոնների մասին եմ խորհրդածելու:

119:41-48 Այս պարբերությունը առանձնահատուկ է իր ԸՂՁԱԿԱՆՆԵՐՈՎ և ԵՉԱԿԻ թվի ԲԱՅԵՐՈՎ:

1. Ես կպատասխանեմ, Սաղմ.119:42ա – BDB 772, KB 851, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով
2. Ես վստահում եմ, Սաղմ. 119:42բ – BDB 105, KB 120, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ ԵՉԱԿԻ
3. Ես սպասում եմ, Սաղմ. 119:43բ – BDB 403, KB 407, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ ԵՉԱԿԻ
4. Ես կպահեմ, Սաղմ. 119:44ա – BDB 1036, KB 1581, *Qal* ԸՂՁԱԿԱՆ ԵՉԱԿԻ
5. Ես կքայլեմ, Սաղմ. 119:45ա – BDB 229, KB 246, *Hithpael* ԸՂՁԱԿԱՆ ԵՉԱԿԻ

6. Ես փնտրում եմ, Սաղմ. 119:45բ – BDB 205, KB 233, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ ԵԶԱԿԻ
7. Ես հայտնելու եմ, Սաղմ. 119:46ա – BDB 180, KB 210, *Piel* ԸՂԶԱԿԱՆ ԵԶԱԿԻ
8. Ես ուրախանալու եմ, Սաղմ. 119:47ա – BDB 1044, KB 1613, *Hithpael* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂԶԱԿԱՆ իմաստով
9. Ես սիրում եմ, Սաղմ. 119:47բ – BDB 12, KB 17, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ ԵԶԱԿԻ
10. Ես բարձրացնելու եմ/ձեռքերս երկարելու եմ, Սաղմ. 119:48ա – BDB 669, KB 724, *Qal* ԱՆԿԱՏԱՐ ԵԶԱԿԻ՝ կիրառված ԸՂԶԱԿԱՆ իմաստով
11. Ես սիրում եմ, Սաղմ. 119:48բ – նույնը ինչ #9
12. Ես խորհրդածելու եմ, Սաղմ. 119:48գ – BDB 967, KB 1319, *Qal* ԸՂԶԱԿԱՆ ԵԶԱԿԻ:

Աստծուն և Նրա հայտնությունը ճանաչելը պահանջում է անձնական արձագանք:

119:41 Նկատե՛ք, որ «ողորմությունը» (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (HESED)) և «փրկությունը» (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿՈՒԹՅՈՒՆ (ՀԿ-ՅԱՆ ՏԵՐՄԻՆԸ)) անձնավորված են որպես հավատարիմ հետևորդների վրա եկող բաներ: Դրա պատճառով նրանք աստվածահաճո կյանքով են ապրում:

119:43ա Այս ԲԱՅԸ (BDB 664, KB 717, *Hiphil* ՀԱՅՑԱԿԱՆ) նշանակում է «խելք»: Այն կիրառվում է՝

1. մահից ազատելու իմաստով՝ 2 Օր. 32:39, Սաղմ. 22:20, 33:19, 56:14, 86:13, Առակ. 24:11
2. մեղքից ազատելու իմաստով՝ Սաղմ. 39:9, 79:9

Այստեղ այն կարծես թե կապ ունի Սաղմ. 119:42-ի հետ, որը մատնանշում է Աստծո հայտնությունից պատասխան այն մարդկանց, ովքեր նախատում են սաղմոսերգուին (ՆԿ-յան գեղեցիկ հատված է Մատթ. 10:19-22, Մարկ. 13:9-12, հատկապես՝ Մարկ. 13:11, Դուկաս 21:12-19):

119:44 Այս տողը շեշտադրում է տվյալ պահին և ապագայում Աստծո հայտնության տեղին՝ հարմար լինելը (տես՝ Մատթ. 5:17-19):

119:46 Սա մատնանշում է հավատարիմ հետևորդների՝

1. պարտություն կրած թագավորների մոտ վկայությունը
2. օտար ազգերի հետ ուխտ կապելու առանձնահատկությունը
3. իշխանություն ունեցող կամ կիրթ մարդկանց համար գործածվող փոխաբերություն

119:48ա «Ձեռքերը երկարացնելը/բարձրացնելը» իսրայելական մշակույթի մեջ աղոթքի համար սովորական դիրք էր (տես՝ Սաղմ. 28:2, 63:4, 134:2, 141:2, 143:6, Ողբ 2:19, 1 Տիմ. 2:8): Դարձյալ, սովորաբար մարդը «իր ձեռքերը վեր է բարձրացնում» հենց Աստծուն, սակայն այստեղ Նրա հայտնությանը:

❖ «խորհրդածելու եմ» Տես Սաղմ. 119:15-ի գրառումը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 119:49-56 (2ային)

⁴⁹Հիշի՛ր Քո ծառային տված խոսքդ, որով ինձ հուսադրեցիր:

⁵⁰Իմ տառապանքի մեջ մխիթարությունս սա է,

Քանի որ Քո խոսքն ինձ կյանք տվեց:

⁵¹Ամբարտավանները խիստ շատ ծաղրեցին ինձ,

Բայց ես չեղվեցի Քո օրենքից:

⁵²Քո հինավուրց դատաստանները հիշեցի, ո՛վ ՏԵՐ, ու մխիթարվեցի:

⁵³Խիստ վրդովմունքով բռնկվեցի

Քո օրենքը լքող ամբարիշտների պատճառով:

⁵⁴Պատվիրաններդ իմ երգերը դարձան իմ պանդխտության տան մեջ:

⁵⁵Գիշերով Քո անունը հիշեցի, ո՛վ ՏԵՐ,

Ու Քո օրենքը պահեցի:

119:49 «Հիշի՛ր» Այս ԲԱՅԸ (BDB 269, KB 269) հանդիպում է երեք անգամ այս պարբերության մեջ:

1. Սաղմ. 119:49 – *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. Սաղմ. 119:52 – *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ
3. Սաղմ. 119:55 – *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ

Սաղմոսերգուն խնդրում է ՅԱՀՎԵԻՆ հիշել իրեն (119:49), քանի որ նա հիշում և հնազանդվում է Նրան (տես՝ Սաղմ. 119:55բ, 56բ):

Ուշադրություն դարձրե՛ք բոլոր ԲԱՅԵՐԻՆ (բացառությամբ առաջին ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻՑ), որոնք ՎԱՂԱԿԱՏԱՐՆԵՐ և ԱՆԿԱՏԱՐՆԵՐ են *վալ*-ով (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ .ԵԲՐԱՅԵՐԵՆ ԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ): Սաղմոսերգուի գիտությունը և գործողությունները հաստատուն աշխարհայացք է, կյանքի իրողություններ: Աստծո խոսքը պարզապես տեղեկություն չէ, այլ՝

1. հույս, Սաղմ. 119:49բ
2. մխիթարություն, Սաղմ. 119:52բ
3. պահպանություն, Սաղմ. 119:50բ
4. կյանքի ուղեցույց, Սաղմ. 119:51բ
5. երգ, Սաղմ. 119:54ա
6. միտք գիշերվա մեջ, Սաղմ. 119:55ա
7. Սաղմ. 119:56ա

- ա. ուրախություն – TEV
- բ. օրհնություն – NRSV
- գ. մխիթարություն – Peshitta

❖ «**Քո ծառան**» Այստեղ այն վերաբերում է հավատարիմ հետևորդին, որը փնտրում, ճանաչում, և ապավինում է Աստծո խոսքին: Տես 2 Օր. 34:5-ի գրառումը www.freebiblecommentary.org Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԻՄ ԾԱՌԱՆ:

❖ «**հուսադրեցիր**» Սա բառացի «սպասել» (BDB 430, KB 407, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ) է: Աստծո խոստումների իրականացմանը սպասելու հասկացությունը թե՛ հավատքի, և թե՛ հույսի քայլ է: Ոչ թե հնարավոր է, կարող է լինել, հուսով եմ, այլ «վստահ իրադարձության հարցում, սակայն ոչ ժամանակի» տեսակի հույս (նման է Երկրորդ Գալատյան մասին ՆԿ-յան կիրառությանը): Սա Սաղմոսների գրքում պարբերաբար կրկնվող թեմա է (տես՝ Սաղմ. 31:24, 33:18,22, 71:4, 119:49, 74, 81, 114, 147, հավաքական իմաստով Սաղմ. 130:7, 131:3-ում): Այս միտքը շատ լավ է արտահայտված Հռոմեացիների 15:4-ում:

119:50 «**մխիթարություն**» Այս ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 637) հանդիպում է միայն այստեղ և Հոր 6:10-ում, սակայն ԲԱՅԸ (BDB 636, KB 688) տարածված է:

Նեղության մեջ այս մխիթարությունը Աստծո Խոսքի վստահելիությունն է: Նա հավատարիմ հետևորդների հետ է անգամ մտահոգությունների, ճախողումների, հարձակումների, ընկճախտի և կասկածների մեջ (տես՝ 2 Օրինաց 31:6, Հեսու 1:5, 1 Թագ. 12:22, 3 Թագ. 6:13, 8:57, 2 Կորնթ. 4:9, Եբր. 13:5): Ինչպե՞ս ես գիտեմ, որ իրավիճակները այլ կերպ են բղավում: Նրա Խոսքը: Սաղմոս 119:52 հիշեցնում է մեզ նայելու Աստծո անցյալի գործերին:

119:51 Սաղմոսերգուն վերապրել է այն մարդկանց հարձակումները, ովքեր գիտեն Աստծո օրենքը, սակայն մերժում են այն (տես՝ Սաղմ. 119:51բ, 53): Ճշմարիտ հավատքն ունի տեսանելի առանձնահատկություններ: Հնազանդությունը ճշմարիտ հավատքի տեսանելի ապացույցն է (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՊԱՀԵԼ):

❖ «**շեղվել**» Այս ԲԱՅԸ (BDB 639, KB 692, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱԲ) ունի լայն ստուգաբանական դաշտ և սովորաբար մատնանշում է «ձգվել», «տարածվել» կամ «ծռվել», սակայն այստեղ ունի հատուկ փոխաբերական իմաստ՝ արահետից մոլորելու, այն արահետից, որը «Աստծո ճանապարհն է» (այսինքն՝ Սաղմ. 139:24): Աստծո խոսքը հստակ նշված ուղի է, արահետ, ճանապարհ: Արահետը տանում է դեպի կյանք, խաղաղություն, ուրախություն, և Աստծո հետ փոխհարաբերության (տես՝ Սաղմ. 119:105, Առակ. 6:23): Գործք Առաքելոց գրքում ՆԿ-ի առաջին եկեղեցու անունը «Ճանապարհ» էր: Ցանակացած շեղում Աստծո խոսքի հստակ ուղեցույցներից բերում է խնդիրներ:

«Դեպի աջ կամ ձախ խոտորել» ՀԿ-յան դարձվածքը կարելի է գտնել 2 Օրինաց 5:32, 17:11, 20, 28:14, Առակ. 4:27-ում: Մնացելք ճիշտ ճանապարհի վրա:

119:53 Հանախ ՀԿ-ում թվում է, թե աստվածավախ մարդիկ բարկություն են կանչում իրենց թշնամիների վրա, սակայն իրականում նրանք կանչում են Աստծուն հավատարիմ լինելու Իր նախորդ խոսքին (այսինքն՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-30): Սրա վառ օրինակ է Սաղմ. 119:158: Բարկությանը արժանանում են գիտակցված, մտադրված անհնազանդությամբ: Մեղքը և ապստամբությունն ունեն հետևանքներ թե՛ ժամանակի և թե՛ հավիտենության մեջ: Մնացելք Աստծուց տրված ճանապարհի մեջ:

119:54 Այս համարը կարծես թե (տես՝ Սաղմ. 119:19) խոսում է կյանքի մասին: Աստծո խոսքն, այն մարդկանց, ովքեր գիտեն այն և պահում են, բերում է ամենօրյա, ամբողջ կյանքի համար երգ (տես՝ Սաղմ. 42:8): Դու երգո՞ւմ ես:

119:55 «**Քո անունը**» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ «ԱՆՈՒՆԸ»:

❖ «**գիշերով**» «Գիշերը» կարող է ունենալ մի քանի նշանակություն՝

1. խորհելու՝ խորհրդածության ժամանակ
ա. Սաղմ. 16:7
բ. Սաղմ. 63:6
գ. Սաղմ. 77:6
2. նեղության ժամանակ – Սաղմ. 77:2
3. աղոթքի, փառաբանության ժամանակ
ա. Սաղմ. 42:8
բ. Սաղմ. 92:1-2
գ. Սաղմ. 119:62
դ. Սաղմ. 149:5
ե. Եսայի 26:9
զ. Մատթ. 14:23, Ղուկ. 6:12
է. Գործք 16:25

❖ «**Քո օրենքը պահեցի**» Գիշերային ժամի խորհրդածությունը, աղոթքը և փառաբանությունը պետք է լինի արդյունքը օրվա ընթացքում ամենօրյա աստվածահանո կյանքի: Հնազանդությունը հավատքի ապացույցն է (տես՝ Ղուկ. 6:46):

119:56 Առաջին տողը անորոշ է, քանի որ ակնհայտ նախորդը՝ նախադեպը չունի:

Սակայն, ուշադրություն դարձրեք, որ այն վերաշեշտադրում է հնազանդությունը երկրորդ տողում: Հիշե՛ք այն բազմաթիվ տերմինները, որոնք գործածվում են Աստծո հայտնության համար (այսինքն՝ խոսք, օրենք, կանոններ, հրամաններ, պատվիրաններ, և այլն):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 119:57-64 (Խեղթ)

⁵⁷Բաժինս *Դո՛ւ ես, ո՛վ ՏԵՐ.*

Ասացի, որ պահելու են Քո խոսքերը:

⁵⁸Ամբողջ սրտով Քո շնորհը խնդրեցի.

Ողորմի՛ր ինձ Քո խոսքի համաձայն:

⁵⁹Իմ ճամփաների մասին խորհեցի

Եվ իմ ոտքերն ուղղեցի դեպի Քո վկայությունները:

⁶⁰Շտապեցի պահել Քո պատվիրաններ ու չհապաղեցի:

⁶¹Ամբարիշտների լարերն ինձ պատեցին,

Բայց ես Քո օրենքը չմոռացա:

⁶²Կես գիշերին ելնում եմ Քեզ գոհություն մատուցելու՝

Քո արդար դատաստանների համար:

⁶³Ընկերություն արեցի բոլոր նրանց հետ,

Ովքեր ակնածում են Քեզնից ու պահում են Քո պատվիրանները:

⁶⁴Երկիրը լեցուն է Քո ողորմությամբ, ո՛վ ՏԵՐ,

Սովորեցրու՛ ինձ Քո կանոնները:

119:57 «ՏԵՐՆ իմ բաժինն է» Այս «բաժին» տերմինը (BDB 324) ունի մի քանի կիրառություն:

1. Դևիի համար հողատարածք չկար՝
ա. Թվոց 18:20
բ. 2 Օր. 18:2
գ. Հեսու 13:33
դ. Եզեկ. 44:28
2. Խոստացյալ Երկրի բաժանումը ցեղերի միջև՝
ա. Հեսու 17:5, 14, 19:9
բ. Եզեկ. 47:13
3. Մարդկության մեջ Իսրայելը որպես հատուկ ժողովուրդ՝
ա. Երեմ. 10:16
բ. Երեմ. 51:19
4. Աստծուց թե՛ արդարին և թե՛ ամբարշտին տրված ինչ-որ բան՝
ա. Հոբ 20:29, 27:13, 31:2
բ. Ժող. 21:20, 21, 3:22, 5:17-18, 9:9
5. փոխաբերորեն կիրառվող հավատքի հատուկ փոխհարաբերություն ՅԱՎԿԵԻ հետ
ա. Սաղմ. 16:5, 73:26, 119:57, 142:5
բ. Ողբ 3:24

❖ **«ասացի, որ պահելու են Քո խոսքերը»** Այս ԲԱՅԸ (BDB 1036, KB 1581) բնութագրում է այս պարբերությունը որպես «հիշողություն» (Սաղմ. 119:49-56):

1. Սաղմ. 119:57 – *Qal* ԱՆՈՐՈՇ ԲԱՂԱԴՐՅԱԼ
2. Սաղմ. 119:60 – *Qal* ԱՆՈՐՈՇ ԲԱՂԱԴՐՅԱԼ
3. Սաղմ. 119:63 – *Qal* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ
4. նաև նկատե՛ք՝ Սաղմ. 119:55

Հնազանդությունը կարևոր է: Հնազանդությունը հայտնում է սիրտը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՀԵԼ

119:58 «Իմ ամբողջ սրտով» Սա դարձվածք է վերցված 2 Օրինացից (տես՝ 2 Օր. 6:5, 10:12, 11:13, 13:3, 30:2), որը մատնանշում է կատարյալ նվիրում: Հետագայում Իսրայելի պատմության մեջ այս արտահայտությունը կիրառվում էր ցույց տալու՝

1. Դավթի լիարժեք նվիրումը Աստծուն
2. Սողոմոնի մասնակի նվիրումը Աստծուն

«Սրտի» համար տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՄԻՐՏԸ

❖ Ուշադրություն դարձրե՛ք, որ աղոթքի խնդրանքը (այսինքն՝ *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 41:4, 56:1, 57:1) հիմնված է ՅԱՀՎԵԻ Իր խոսքին՝ խոստմանը հավատարմության վրա (տես՝ Սաղմոս 119:41, 58, 76, 116, 170): ՅԱՀՎԵԻ և Նրա հայտնության վստահելիությունը սուրբգրային հավատքի կարևոր սյուներից է (տես առցանց տեղադրված Աստվածաշնչի վստահելիության մասին չորս քարոզները www.freebiblecommentary.org, գլխավոր էջի, առաջին պարբերության հղման մեջ):

119:59-60 Ինչպես որ ՅԱՀՎԵԻ մասին է ասվում, որ հավատարիմ է Իր խոստումներին, այժմ սաղմոսերգուն է հաստատում իր հավատարմությունը (տես՝ Սաղմ. 119:57բ, 61բ): Աստծո օրենքին անմիջական հնազանդությունը արտահայտում է լիարժեք նվիրում:

Նկատե՛ք երկու ԲԱՅԱԿԱՆ ԿԱԶՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ շեշտադրությունը՝

1. շտապեցի – BDB 554, KB 300, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ

2. հապաղել (ժխտական) – BDB 554, KB 552, *Hithpalpel* ԱՆԿԱՏԱՐ

Աստծուն կանչում ենք, որ արագ պատասխանի (տես՝ Սաղմ. 69:17, 79:8, 102:2, 143:7), այնպես էլ, հավատարիմ հետևորդը պետք է արագ արձագանքի Հոգու առաջնորդությանը:

119:59 «ուղղեցի» Այս ԲԱՅԸ (BDB 996, KB 1427, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ *վալ-*ով) ունի լայն ստուգաբանական նշանակություն, սակայն հիմնական տերմինը կիրառվում է «ապաշխարության» համար: Հետևաբար որոշ մեկնաբաններ (UBS *Ձեռնարկը*, էջ՝ 1014) այս համարը դիտարկում են, որպես Աստծո օրենքը խախտող, ապա ուղղվող մեկի, որը վերադառնում օրենքը պահելու և Աստծուն պատվելու համար:

119:61 Հեշտ չէր սաղմոսերգուի համար ապրել հավատարիմ կյանք, քանի որ մշտապես թշնամիներ ուներ:

ԲԱՅԸ (BDB 728, KB 795, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ) գտնվում է միայն այստեղ և թարգմանվում է (տես՝ NIDOTTE, հատոր 3, էջ՝ 339):

1. NASB – «շրջապատված»
2. NKJV – «կապված»
3. LXX, NRSV, NJB – «թակարդի մեջ ընկած»
4. TEV – «ծուղակ դնել»
5. JPSOA – «պարուրված»
6. Peshitta – «պաշարված»

AB (էջ՝ 181) կապում է սա Սաղմ. 116:3-ի հետ և անսովոր կերպով դիտարկում այս տողը որպես թե անձնավորված մահվան՝ գերեզմանի հետ առնչություն ունեցող:

❖ «**ես Քո օրենքը չմոռացա**» Սա պարբերաբար կրկնվող թեմա է այս Սաղմոսում (տես՝ Սաղմ. 119:61, 83, 109, 141, 153, 176): Ամբարիշտը մոռանում է Աստծո օրենքը (տես՝ Սաղմ. 50:22, 119:139):

119:62 Այս գիշերային խորհրդածությունը կապված է Սաղմ. 119:55-ի հետ:

119:63 Ուշադրություն դարձրե՛ք, թե ինչպես են բնութագրվում հավատարիմ հետևորդները:

1. նրանք, որ վախենում՝ ակնածում են Զեզնից
2. նրանք, ովքեր պահում են Քո հայտնությունը/պատվիրանը

Աստծո հետ փոխհարաբերության կյանք չի կարող լինել, քանի դեռ ապրում եք գիտակցված անհնազանդության կյանքով:

119:64 Ուշադրություն դարձրե՛ք այս համարի տիեզերական առանձնահատկությունը: «Երկիր» բառի համար տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՀՈՂ, ԵՐԿԻՐ, ԵՐԿՐԱԳՈՒՆԴ:

«Ողորմություն» տերմինը թարգմանված NASB-ի կողմից *hesed*-ն է: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (HESED) և Սաղմ. 33:5-ի գրառումը:

❖ «սովորեցրու ինձ Քո կանոնները» Սա այս պարբերության մեջ միայն երկրորդ ՀՐԱՄԱՅԱ-ԿԱՆՆ Է (տես՝ Սաղմ. 119:58բ): Չնայած որ սաղմոսերգուն խորհրդածում է Աստծո խոսքի՝ խոստման վրա, այնուհանդերձ նա կարիք ունի այն ավելին հասկանալու: Կանոնավոր կերպով, Սուրբ Հոգով առաջնորդված Սուրբ Գրքի սերտողությունը կարևոր է հասուն, աճող հավատացյալի համար (տես՝ Սաղմ. 119:12,26,64,108,124,135,171):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 119:65-72 (Թեթ)

⁶⁵Բարությանը վարվեցիր Քո ծառայի հետ,
Ո՛վ ՏԵՐՔՈ խոսքի համաձայն:
⁶⁶Ճշմարիտ հասկացողություն ու գիտություն սովորեցրու ինձ,
Քանի որ հավատացի Քո պատվիրաններին:
⁶⁷Քանի դեռ վշտացած չեի, սխալվեցի,
Բայց հիմա պահում եմ Քո խոսքը:
⁶⁸Բարի ես Դու ու բարին ես անում .
Սովորեցրու ինձ Քո կանոնները:
⁶⁹Ամբարտավանները ստեր հորինեցին իմ դեմ,
Բայց ես ամբողջ սրտով Քո հրամաններն եմ կատարելու:
⁷⁰Նրանց սիրտը ճարպի պես թանձրացած է,
Բայց ես Քո օրենքով ուրախացա:
⁷¹Լավ եղավ ինձ համար, որ վշտացա,
Որպեսզի Քո կանոնները սովորեմ:
⁷²Ինձ համար Քո բերանի օրենքը
Հազարավոր ոսկուց ու արծաթից ավելի լավ է:

119:65 Այս համարը ամփոփում է հավատարիմ հետևորդի աշխարհայացքը: Աստծո հայտնության գիտությունը (Սաղմ. 119:66) և դրան հնազանդությունը (Սաղմ. 119:67,69) տանում է երջանիկ, առողջ, խաղաղ կյանքի: Ճշմարիտ կյանքը գտնվում է միայն Նրա մեջ: Հիշե՛ք, որ այս Սաղմոսում Աստծո խոսքի գիտությունը հավասար է հենց Աստծուն ճանաչելուն:

Այս սաղմոսի գրեթե յուրաքանչյուր համար ունի երբայերեն բառ, որը մատնանշում է Աստծո հայտնությանը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈՆ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՐԾԱԾՎՈՂ ՏԵՐ-ՄԻՆՆԵՐ):

Երբայերեն «լավ» շո՞ բառը (BDB 373) սկսում է Սաղմ. 119:65,66,68,71 և 72 համարները: Սա հանդիսանում է այս տան բանալի բառը:

119:66 Չնայած որ սաղմոսերգուն գիտի Աստծո հայտնությունը, նա գիտակցում է, որ ավելի շատ կարիք ունի այն հասկանալու (տես՝ Սաղմ. 119:68, երկու ԲԱՅԵՐԸ՝ «սովորեցնե՛ք» BDB 540, KB 531 *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ են, այսինքն՝ աղոթքի խնդրանք, տես՝ Սաղմ. 119:12, 26, 64, 66, 68, 108, 124, 135, 171):

❖ «**հավատացի**» Մի քանի ՎԱՂԱԿԱՏԱՐ ԲԱՅԵՐ կան, որոնք նկարագրում են սաղմոսերգուի վերաբերմունքը:

1. ես հավատում եմ – BDB 52, KB 63, *Hiphil* ՎԱՂԱԿԱՏԱՐ (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼԸ, ՎԱՍԱՀԵԼԸ, ՀԱՎԱՏՔԸ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԿ-ՈՒՄ)
2. ես պահում եմ – BDB 1036, KB 1581, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՀԵԼ)
3. ես ուրախանում եմ/ուրախացա – BDB 1044, KB 1613, *Pilpel* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 1:2, 112:1, 119:16,24,35,47,70,77,92,143,174

Ուշադրություն դարձրե՛ք, թե ինչպես պետք է մտավոր վերելքը համապատասխանի հնազանդ կյանքին (տես՝ Հակոբոս 1:22-25):

119:67 Սաղմոսերգուն խոստովանում է իր անցյալի անհնազանդությունը, որի արդյունքում դիմել է Աստծո խրատին: Աստծո խրատը սիրող ծնողի պես վերաբերմունքն է (տես՝ Եբր.12:5-13): Դևտացիների 26-ի և 2 Օրինաց 27-30-ի անեծքները Աստծո արձագանքն են ուխտի անհնազանդությանը և Իր ցանկությունը Իր հետևորդների համար իրենց ճանապարհները փոխելու: Նա կամենում է մեզ օրհնել: Խրատը միշտ ունի փրկող նպատակ՝ մտադրություն:

119:68 Սաղմոսի այս առաջին տողը նկարագրում է Աստծո բնավորությունը: Նա «բարի» է (BDB 373 II, տես՝ Սաղմ. 25:8, 86:5, 100:5, 106:1, Երեմ. 33:11, Նաում 1:7):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏԾՈՒ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ

❖ **«սովորեցրո՛ւ ինձ Քո կանոնները»** Սա այս ԲԱՅԻ *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ երկրորդ կիրառությունն է (տես՝ Սաղմ. 119:66): Աստված կամենում է հայտնել Իրեն և Իր կամքը Սուրբ Գրքի խոսքերի միջոցով:

119:69-70 Ինչպես որ շատ հաճախ է Սաղմոսներում նկարագրվում, Սաղմոսերգուն հարձակման ներքո է զգում իրեն: Ամբարտավանները ստել են իր մասին: Ըստ համատեքստի դժվար է զանազանել, թե ովքեր էին այս հարձակվողները: Նրանք հիմնականում հասարակության հարուստ և իշխանավոր մարդիկ էին, ինչպես և այստեղ (այսինքն՝ «ճարպ» BDB 316, Սաղմ. 119:70ա, տես՝ Սաղմ. 17:10, 73:7, Սա հոգևոր տեսանկյունից զուգահեռ է Եսայի 6:10, BDB 1031 I): Սակայն իրական հարստությունը սաղմոսերգուի համար Աստծո և Նր հայտնության գիտությունն է (Սաղմ. 119:72, տես՝ 19:10):

119:69 Առաջին տողի այս ԲԱՅԸ (BDB 381, KB 378, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) նշանակում է հորինել կամ քսել (տես՝ Հոր 13:4): Այս տունն ունի երկու ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, որոնք նկարագրում են սաղմոսերգուի շարունակական գործողությունը:

1. ես պահելու եմ, Սաղմ. 119:69 – BDB 665, KB 718, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
2. որպեսզի սովորեմ, Սաղմ. 119:71 – BDB 540, KB 531, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

119:70 «սիրտ» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԻՐՏ

119:70բ Եբրայերեն տեքստում չկա «բայց»: Այնուհանդերձ ենթադրվում է խիստ հակադրություն: Ենթադրվում է 2 Օրինաց 30:15-20 և Սաղմոս 1:1-ի «երկու ճանապարհը»:

119:71 Սաղմոսերգուն գիտակցում է, որ Աստծո խրատը օգտակար է, քանի որ դա հանգեցրել է իրեն վերադառնալու Նրան և Նրա խոսքին: Այսինքն անարդարությունը, անձնական որոշումների՝ ընտրությունների սարսափելի հետևանքները հաճախ առիթ են հանդիսանում ավելի շատ վստահելու Աստծուն: Այս բնագավառում ինձ շատ է օգնել Հաննա Ուիթթոլ Սմիթի *Զրիստոսնյայի Երջանիկ կյանքի գաղտնիքը* գիրքը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 119:73-80 (Յող)

⁷³Ինձ Քո ձեռքերն արարեցին ու ձևավորեցին .

Իմաստությունն տուր ինձ, որպեսզի սովորեմ Քո պատվիրանները:

⁷⁴Քեզնից վախեցողները ուրախանալու են,

Երբ ինձ տեսնեն, քանի որ Քո խոսքին հուսացի:

⁷⁵Գիտեմ, ո՛վ ՏԵՐ, Քո դատաստաններն արդար են,

Ու ինձ իրավացիորեն վշատացրիր:

⁷⁶Հիմա, աղաչում եմ Քեզ, թող ողորմությունդ ինձ մխիթարություն լինի՝

Քո ծառայիդ տված խոստման համաձայն:

⁷⁷Թող Քո գթառատություն իմ վրա գա, որպեսզի ապրեմ,

Քանի որ Քո օրենքն իմ ուրախությունն է:

⁷⁸Ամբարտավաններն ամաչելու են, քանի որ առանց պատճառի
 Անիրավություն գործեցին իմ դեմ,
 Բայց ես Քո հրամանների մասին եմ խորհրդածելու:
⁷⁹Թող ինձ դառնան Քեզնից վախեցողները
 Եվ Քո վկայությունները ճանաչողները:
⁸⁰Թող իմ սիրտը անթերի լինի Քո կանոնների մեջ,
 Որպեսզի չամաչեմ:

119:73 Այս համարը հաստատում է Աստծո կողմից սաղմոսերգուի ստեղծված լինելը: Սա մի քանի կերպերով է արտահայտված:

1. Ակնարկ Ծննդ. 2:7-ին («ձևավորված» /մարմինը/ - BDB 427, «ձևավորված օրերը» - Սաղմ. 139:16)
2. Քո ձեռքերը ինձ արարեցին – BDB 793 I, տես՝ Հոբ 10:8, 31:15, Սաղմ. 139:15
3. Քո ձեռքերի գործերը – Հոբ 10:3, 14:15, Սաղմ. 138:8
4. երկու ԲԱՅԵՐԸ էլ հանդիպում են 2 Օրինաց 32:6-ում և նկատի ունեն հավաքական Իսրայելը

Մարդիկ հատուկ արարածներ են, որոնք ստեղծվել են Աստծո պատկերով ու նմանությամբ (տես՝ Ծննդ. 1:26-27) հաղորդակցության համար (տես՝ Ծննդ. 3:8): Նրանցից յուրաքանչյուրը յուրահատուկ ստեղծագործություն է (տես՝ Սաղմ. 139:14-16): Սա է սուրբգրային աշխարհայացքը սա հասկանալու համար: Մենք պատահական դեպքերի կամ ընթացակարգերի արդյունք չենք: Յուրաքանչյուր անձի ստեղծագործության համար նպատակ կա:

❖ «**իմաստություն տուր ինձ**» Սա միակ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (Սաղմ. 119:73-80) աղոթքի խնդրանքն է այս տան մեջ (BDB 106, KB 122, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ), սակայն կան մի քանի ՀԱՅՅԱԿԱՆՆԵՐ:

Միայն Աստված կարող է բացել ընկած մարդկային էակների միտքը սովորելու (BDB 540, KB 531, *Qal* ԸՂՁԱԿԱՆ) Իր մասին՝ Իր հայտնությունը հասկանալու միջոցով: Այս ուսումը (ինչպես 2 Օրինաց 6:4-9-ի *shema* ԲԱՅԸ) ենթադրում է Աստծո հայտնության կիրառությամբ ամենօրյա ապրելակերպ:

119:74 «թող» Սա ՀԱՅՅԱԿԱՆ կազմության նշան է (տես՝ Սաղմ. 119:74, 76, 77, 78, 79, 80): Սրանք նաև արտացոլում են աղոթքի խնդրանքներ:

Այս համարում կան երկու՝

1. տեսնել – BDB 906, KB 1157, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով
2. ուրախանալ – BDB 970, KB 1333, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով

Ուշադրություն դարձրեք, որ այս իրողությունները հիմնված են սաղմոսերգուի՝

1. համբերության վրա (բառացի՝ «սպասիր», «հուսա», Սաղմ. 119:74բ)
2. Աստծո հայտնության գիտության վրա (Սաղմ. 119:75)
3. աստվածային տիրության վրա (119:75, 67, 71)

«Սպասեք» ԲԱՅԸ (BDB 403, KB 407, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ) մատնանշում է համբերություն: Սովորաբար այս ԲԱՅԸ մատնանշում է հույս / համբերություն հենց Աստծո հանդեպ (տես՝ Հոբ 13:15, Սաղմ. 31:24, 33:22, 38:15, 39:7, 42:5, 11, 43:5, 69:3, 130:7, 11:3), սակայն Սաղմոս 119-ում Աստծո հայտնության աստվածաբանական հասկացությունը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐ) փոխարինված է հենց Աստծով: Նրանք նույնն են: Աստծո Խոսքն իմանալ նշանակում է ճանաչել Աստծուն: Մեկը տեղեկատվական է, իսկ մյուսը հաղորդակցական, սակայն այս երկուսը պետք է միասին ընթանան:

119:75 «դատաստանները» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԱՏԵԼ, ԴԱՏԱՍՏԱՆ և ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ:

❖ «**արդար**» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

❖ **«ինձ իրավացիորեն վշտացրիր»** ՅԱՀՎԵՆ հավատարիմ է Իր խոսքին և Իր նպատակներին Իր հավատարիմ հետևորդների համար: Ստեղծագործության համար կա ավելի մեծ նպատակ: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ: Անգամ «վիշտը» ունի վերջնական նպատակ (տես՝ Ողբ 3:19-38, Եբր. 5:8, 12:1-13): Փրկության նպատակը միայն փոխհարաբերությունը չէ ինչ-որ մի ապագայի վիճակում՝ վայրում, այլ մտերմիկ փոխհարաբերությունը հիմա, որը արտացոլում է ՅԱՀՎԵԻ հետևորդների կողմից ընտանեկան առանձնահատկություններ այն մարդկանց հանդեպ, որոնց ստեղծել է ՅԱՀՎԵՆ, սակայն անկման պատճառով դեռևս չեն ճանաչում Նրան:

Պետք է հիշել, որ այս կյանքում խնդիրներն ունեն մի քանի հավանական սկզբնաղբյուրներ՝ նպատակներ:

1. մեղքի համար դատաստան, որպեսզի վերականգնեն կամ նախաձեռնեն հավատքի փոխհարաբերություն ՅԱՀՎԵԻ հետ (տես՝ Սաղմ. 69:26):
2. Անկման արդյունքը: Չարը մտել է մեր աշխարհ: Վատ բաներ են տեղի ունենում, որոնք Աստծո կամքը չեն (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ):
3. դրանք պատճառ են հանդիսանում, որ վստահենք Աստծուն և կատարելագործենք մեր հավատքը (տես՝ Հռոմ. 5:3-5, Եբր. 5:8, 12:10-11):

Քանի որ ես չգիտեմ, թե դրանցից ստույգ որը կարող է լինել, ես նախընտրում եմ կենտրոնանալ #3-ի վրա: Իմ աշխարհայացքն այսպիսին է, որ Աստծո ժողովրդի հետ ոչ մի պատահական բան տեղի չի ունենում:

119:76 «Քո ողորմությունը» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ

❖ **«Քո խոստման/խոսքի համեմատ»** Սա պարբերաբար կրկնվող թեմա է (տես՝ Սաղմ. 119:65): Աստված հավատարիմ է Իր հայտնությանը:

119:77 «Քո օրենքն իմ ուրախությունն է» Տես Սաղմ. 119:70-ի գրառումը:

119:78ա Սա անդրադառնում է Սաղմ. 119:69-70: Ամբարտավանները ամաչելու են (տես՝ Սաղմ. 119:6-ի գրառումը), բայց ոչ հավատարիմ սաղմոսերգուն (տես՝ Սաղմ. 119:80):

119:78բ «ես Քո հրամանների մասին եմ խորհրդածելու» Հավատարիմ հետևորդները ժամանակ են անցկացնում Աստծո խոսքի վրա: Նրանք ուսումնասիրում են, խորհում են և փորձում կիրառել այն, ինչ ասում է Խոսքը: Մեր մտքերը դառնում են մեր գործողությունները: Հայտնության վրա խորհրդածությունը կարևոր է (տես՝ Սաղմ. 1:2, 119:15, 23, 48, 78, 97, 148): Ինչքա՞ն հաճախ եք դուք ժամանակ անցկացնում Աստծո Խոսքի մեջ:

119:79 Այս համարը հաստատում է այն ճշմարտությունը, որը Աստծուն փնտրողները կարիք ունեն Նրան տեսնելու այն մարդկանց մեջ, ովքեր ասում են, որ հետևում են Նրան: Հավատարիմ հետևորդները պետք է լինեն յույսերի պես, որոնք առաջնորդում են դեպի Աստծուն:

❖ **«ճանաչողները»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՃԱՆԱԶԵԼ

119:80 «անթերի» ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՆԹԵՐԻ, ԱՆԱՐԱՏ, ԱՆՀԱՆՅԱՆՔ, ԱՌԱՆՑ ՆԱԽԱՏԻՆՔԻ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 119:81-88 (Քաֆ)

⁸¹Իմ անձը նվաղում է Քո փրկության սպասումից,

Բայց իմ հույսը Քո խոսքի վրա է:

⁸²Իմ աչքերը մաշվեցին Քո խոսքին ցանկալով՝

Ասելով՝ «Ե՛րբ ես մխիթարելու ինձ»:

**⁸³Թեև ես ծխի մեջ նետված տիկի նմանվեցի,
 Սակայն կանոններդ չմոռացա:
⁸⁴Որքա՞ն են Քո ծառայի օրերը,
 Ե՞րբ ես դատաստան տեսնելու ինձ հալածողների հետ:
⁸⁵Ամբարտավաններն ինձ համար փոսեր փորեցին,
 Որ Քո օրենքին համապատասխան չէ:
⁸⁶Քո բոլոր պատվիրանները ճշմարիտ են .
 Անիրավորեն ինձ հալածում են, օգնի՛ր ինձ:
⁸⁷Քիչ մնաց, որ ինձ կորստյան մատնեին երկրի վրայից,
 Բայց ես չլքեցի Քո պատվիրանները:
⁸⁸Քո գթասիրությամբ կենդանացրո՛ւ ինձ,
 Եվ ես Քո բերանի վկայությունը կպահեմ:**

119:81-88 Այս տան մեջ գերակշռում են ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՅԵՐԸ: Սաղմոսերգուն գգում էր, որ հարձակման տակ է՝

1. հալածողների կողմից, Սաղմ. 119:84
2. ամբարտավանները ինձ համար փոսեր փորեցին, Սաղմ. 119:85
3. մարդիկ, որոնք Քո օրենքի համաձայն չեն ապրում, Սաղմ. 119:85
4. նրանք ինձ հալածեցին ստով, Սաղմ. 119:86
5. քիչ մնաց, որ ինձ կորստյան մատնեին երկրի վրայից, Սաղմ. 119:87

Նա ասում է, որ հավատարիմ է Աստծո խոսքին և խնդրում է Աստծուն, որ գործի իր համար՝

1. օգնիր ինձ – BDB 740, KB 810, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, Սաղմ. 119:86
2. կենդանացրու, պաշտպանիր ինձ – BDB 1036, KB 1581, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, Սաղմ. 119:88

119:81 «անձ» Սա *nephesh* տերմինն է (BDB 659): Ամբողջական քննարկման համար տես Ծննդ. 35:18-ի գրառումը www.freebiblecommentary.org

❖ **«նվաղում է»** Սաղմոսերգուն օգտագործում է մի քանի ԲԱՅԵՐ նկարագրելու իր ֆիզիկական և մտավոր վիճակը:

1. նվաղում է – BDB 477, KB 476, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, Սաղմ. 119:81
2. սպասում է – BDB 403, KB 407, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ, Սաղմ. 119:81
3. աչքերս մաշվեցին – BDB 477, KB 476, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, Սաղմ. 119:82
4. ծխի մեջ նետված տիկի նմանվեցի – BDB 224, KB 243, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ: Սա մի անսովոր և հազվադեպ դարձվածք է: Այն կարծես թե նշանակում է «այրված» և «ղյուրաբեկ, փխրուն»: Հաջորդ տողի պատճառով այն կարող է մատնանշել ծխից կուրություն (տես՝ 1 Կորնթ. 13:12):

119:82 Կյանքի և անձնական հարձակումների խնդիրների մեջ, անգամ հավատարիմ հետևորդը կանչում է Աստծուն՝ «Ինչո՞ւ» կամ «ե՞րբ է սա ավարտվելու»:

119:83 Սաղմ. 119:83ա-ի դարձվածքը անսովոր և անորոշ է (տես՝ Սաղմ. 119:81, #4 –ի գրառումը):

Երկրորդ տողը սաղմոսերգուի կողմից իր սեփական հավատարմությունը պնդելու փորձ է (տես՝ Սաղմ. 119:81բ, 87բ, նաև ուշադրություն դարձրե՛ք Սաղմ. 119:61, 141, 153, 176): Նրա հալածիչները արժանի են Աստծո դատաստանին, սակայն ինքը՝ ոչ: Նա իրեն գգում է Աստծո հավատարմության վրա (տես՝ Սաղմ. 119:88ա):

119:84 «Որքա՞ն են Քո ծառայի օրերը» Սա հաստատում է՝

1. Աստծո կանխագիտությունը (տես՝ Մատթ. 10:29-31)
2. մարդու կյանքի սահմանափակ ժամանակը (տես՝ Սաղմ. 39:4)

3. կանչ գործելու՝ ապրելու մեզնից յուրաքանչյուրին տրված ժամանակի մեջ համահունչ (տես՝ Սաղմ. 90:12, Մատթ. 6:25-34, Եփես. 5:15-16):

119:85 «փոսեր փորեցին» Սա որսորդության որորտից դարձվածք է: Փոսը փորվում էր որսին բռնելու նպատակով: Այն փոխաբերության է վերածվել մարդու խարդախության համար (տես՝ Սաղմ . 7:15, 57:6, Երեմ. 18:22):

NEB և REB տարբերակները «փոս» (BDB 1001) տերմինի փոխարեն դիտարկում են երբայերենի «պատմվածքներ» արմատը (BDB 967): Սա միայն մի տառի՝ *շ*-ից *շ*-ի փոփոխության շնորհիվ է:

119:86 «Պատվիրանները» այստեղ հնարավոր է վերաբերում է Աստծո հայտնված կամքը խախտողների վրա «անեծքներին» (տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-30): Մրանք այն հալածողներն են, որոնց մասին հիշատակվում է Սաղմ. 119:85բ-ում, ովքեր չեն ապրում Աստծո օրենքի համաձայն:

Նրանք հավատարիմ հետևորդների ճիշտ հակառակն են (տես՝ Սաղմ. 119:81, 82, 83, 87):

❖ **«օգնի՛ր ինձ»** Այս ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ (տես՝ Սաղմ. 119:81-88-ի գրառումը) նման է Սաղմ. 109:26-ին: Աստծո ուխտի հավատարմությունը (այսինքն՝ *hesed*, տես՝ Սաղմ. 119:88ա, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ) մարդկության հույսի համար հիմքն է: Դա Նրա ողորմության և շնորհքի անփոփոխ բնավորությունն է, որը բերում է հույս և խաղաղություն այս անկում ապրած աշխարհում: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏԾՈՒ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ:

119:88ա UBS *Ձեռնարկը* (էջ՝ 1022) նշում է, որ MT և LXX տալիս են «իննայի իմ կյանքը» ԲԱՅԸ (BDB 310, KB 309, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ), մինչդեռ DSS տեքստը տալիս է «բարեհաճ եղի իմ հանդեպ» (տես՝ TEV):

119:88բ Սա Աստծո հավատարիմ հետևորդների ցանկությունն է (տես՝ Սաղմ. 19:14):

«Պահել» (BDB 1036, KB 1581) ԲԱՅԸ *Qal* ԸՂՁԱԿԱՆ է: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՀԵԼ: Հայտնությանը ցուցաբերած հնազանդությունը կարևոր է և ապացույց է մարդու ՅԱՀՎԵԻ և Նրա Մեսիայի հետ ունեցած հավատքի փոխհարաբերության (տես՝ Ղուկաս 6:46):

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 119:89-96 (Լամեղ)

⁸⁹Քո խոսքը, ո՛վ ՏԵՐ, հավիտյան հաստատուն է երկնքում:

⁹⁰Քո հավատարմությունը բոլոր սերունդների վրա տարածվում է.

Դու հաստատեցիր երկիրն, ու այն մնում է:

⁹¹Ըստ Քո վճռի՝ շարունակում են մինչև այսօր.

Քանի որ բոլորը Քո ծառաներն են:

⁹²Եթե Քո օրենքը իմ ուրախությունը չլիներ,

Ես կործանված կլինեի իմ տառապանքի մեջ:

⁹³Ես երբեք չեմ մոռանա Քո հրահանգները,

Քանի որ դրանցով կենդանացրիր ինձ:

⁹⁴Ես Քոնն եմ, փրկի՛ր ինձ,

Քանի որ պատվիրաններդ փնտրեցի:

⁹⁵Ամբարիշտներն ինձ սպասեցին, որպեսզի ինձ վերացնեն,

Բայց ես մտաբերելու եմ Քո վկայությունները:

⁹⁶Ամեն կատարյալ բանի վերջը տեսա,

Բայց Քո պատվիրանը խիստ բնորոշակ է:

119:89 «Հավիտյան» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ ('olam):

❖ **«ՈՎ ՏԵՐ»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ:

❖ **«Քո խոսքը հաստատուն է երկնքում»** ԲԱՅԻ (BDB 662, KB 714, *Niphal* ԴԵՐԲԱՅ) հիմնական իմաստն է «կանգնել»: Սա այս ԲԱՅԻ միակ կիրառությունն է այս դարձվածքի մեջ:

Աստծո հաստատուն, կայուն ստեղծագործության գաղափարը (տես՝ Եսայի 54:18) Սաղմ. 119:90-91-ի շեշտադրումն է (այլ ԲԱՅՈՎ, BDB 763, KB 840): Ուշադրություն դարձրեք այն բաներին, որոնք հաստատուն են՝ «կանգուն»:

1. ՅԱՀՎԷԻ խոսքը (Սաղմ. 119:89բ, 91ա)
2. ՅԱՀՎԷԻ հավատարմությունը
3. ՅԱՀՎԷԻ ստեղծագործությունը

Դրանք բոլորն էլ Նրա ծառաներն են (Սաղմ. 119:91բ): Սակայն նկատե՛ք, որ Սաղմ. 119:96 կարծես թե ենթադրում է հակադրություն: Այնուհանդերձ, հակադրության շեշտադրությունն անորոշ է:

119:90ա Այս ճշմարտությունը զուգահեռվում է Սաղմ. 36:5 և 89:1-2-ում: Դրանք խոսում են Աստծո հավիտենության, Նրա խոսքի և ստեղծագործության մասին: Հավատարմությունը բնութագրում է՝

1. Հենց Աստծուն
2. Նրա հայտնությունը խոսքի մեջ
3. Նրա հայտնությունը ստեղծագործության մեջ (տես՝ Սաղմ. 119:91, 148:1-6, Երեմ. 31:35-37):

119:91 «բոլորը Քո ծառաներն են» Այս դարձվածքը նկատի ունի բոլոր արարված բաները (այսինքն՝ Ծննդոց 1, տես՝ Սաղմ. 103:19, Ժող. 11:5, Երեմ. 10:16, 51:19): Աստծո Խոսքն է ֆիզիկական աշխարհը գոյության կոչել և պահպանում է այն: Ֆիզիկական ունի իր սահմանները (տես՝ Սաղմ. 119:96), սակայն Աստծո Խոսքը սահմաններ չունի:

119:92 «Եթե» Ուշադրություն դարձրե՛ք սաղմոսերգուի վերաբերյալ հետևյալ պայմանական հայտարարությունները, որը կարիք ունի փրկվելու՝ կենդանանալու և Աստծո հայտնությանը, որը հավիտենական է: Ուշադրություն դարձրե՛ք «ես»-երի քանակին Սաղմ. 119:92-96-ում NASB թարգմանության մեջ (6), որը նկարագրում է սաղմոսերգուի մտքերն ու գործողությունները:

119:93 «Ես երբեք չեմ մոռանա Քո հրահանգները» Տես՝ Սաղմ. 119:83բ-ի գրառումը:

❖ **«քանի որ դրանցով կենդանացրիր ինձ»** Այս ԲԱՅԸ *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ է, որը մատնանշում է Աստծո կողմից կատարած՝ ավարտուն փրկության գործը: Սա հակադրված է Սաղմ. 119:88-ի ՀՐԱՄԱՅԱԿԱՆՈՎ:

119:94 «Ես Քոնն եմ» Սաղմոսերգուն ասում է, որ ինչպես ստեղծագործությունը, ինքն էլ պատկանում է ՅԱՀՎԷԻՆ՝ արարչին ամեն ինչի, որոնք ծառայում են Նրա նպատակներին:

❖ **«փրկիր ինձ»** Սա *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է, միակ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ այս տան մեջ: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿՈՒԹՅՈՒՆ (ՀԿ-ՅԱՆ ՏԵՐՄԻՆԸ): Սաղմոսերգուն զգում է, որ հարձակվում են իր վրա (Սաղմ. 119:95ա): Սաղմ. 119:92-ում «վիշտ» տերմինը կարող էր նկատի ունենալ կա՛մ «ամբարշտի», կա՛մ էլ Աստծո գործոնը (Սաղմ. 119:67, 71):

ՅԱՀՎԷԻՆ փրկում է նրանց, ովքեր փնտրում՝ վստահում են Իրեն (տես՝ Սաղմ. 13:5, 25:2, 31:14, 52:8, 56:4, 86:2): Ուխտն ունի երկու կողմ (Աստվածայինը և անհատ մարդունը):

❖ **«պատվիրանների փնտրեցի»** Հավատարիմ հետևորդների կողմից Աստծո հայտնությունը ակտիվորեն փնտրելու (BDB 205, KB 233, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) այս գաղափարին նաև հանդիպում ենք Սաղմ. 119:2, 45, 155-ում: Գոյություն ունի հայտնության աստվածային կողմը, և հայտնության անհատական կողմը:

119:96 Այս համարը դժվար է հասկանալ: Սակայն, այն ինչ «սահմանափակ» է (կարծես թե նկատի ունի ստեղծված կարգուկանոնը) հակադրվում է Աստծո հավիտենական (բառացի՝ «ընդարձակ») հայտնությանը (այսինքն՝ սահման չունի):

«Կատարյալ» տերմինը (BDB 479) գտնվում է միայն այստեղ:

Սաղմոսերգուն կանչում է Հավիտենականին, որպեսզի փրկի իրեն: Ամբարիշտը կործանվելու է, ստեղծագործությունը կործանվելու է (այսինքն՝ 2 Պետրոս 3:10, 12), սակայն Հավիտենականը հիշում է Իր հավատարիմ հետևորդներին:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 119:97-104 (Մեմ)

⁹⁷Որքան են սիրում Քո օրենքը:

Իմ ամենօրյա մտածումն է այն:

⁹⁸Քո պատվիրանների միջոցով ինձ իմ թշնամիներից ավելի իմաստուն դարձրիր,

Քանի որ դրանք միշտ ինձ հետ են:

⁹⁹Իմ ձեռք բերած հասկացողությունն ավելին է,

Քան իմ բոլոր ուսուցիչներինը,

Քանի որ Քո վկայություններն են իմ մտածումի առարկան:

¹⁰⁰Ծերերից ավելի հասկացողություն ձեռք բերեցի,

Քանի որ Քո հրամանները պահեցի:

¹⁰¹Ամեն մի վատ ճանապարհից ոտքերս ետ պահեցի,

Որպեսզի պահեմ Քո խոսքը:

¹⁰²Քո դատաստաններից չեղվեցի,

Որովհետև Դու ինձ սովորեցրիր:

¹⁰³Որքան քաղցր են Քո խոսքերն իմ քիմքին,

Մեղրից ավելի քաղցր՝ իմ բերանին:

¹⁰⁴Քո պատվիրաններով հասկացողություն ձեռք բերեցի,

Դրա համար էլ ատում են ամեն մի կեղծ ճամփա:

119:97 «Որքան են սիրում Քո օրենքը» Սաղմոս 19 և 119-ը շատ կերպերով պատմական գրքերի և մարգարեական գրքերի Աստծո հայտնության հանդեպ Իսրայելի գործելակերպի ներկայացման աստվածաբանական հակադարձն են հանդիսանում:

Սիրում են (BDB 12, KB 17, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱԲ) խոսքը բնութագրվում է որպես «ամբողջ օրվա խորհրդածություն» (տես՝ Սաղմ. 119:15, 48, 99):

Սիրել նշանակում է (տես՝ 2 Օրինաց 6:5)՝

1. ժամանակ անցկացնել այդ մեկի հետ
2. նրանքով ուրախանալ
3. հնազանդվել
4. փոխանցել ուրիշներին

Այս արտահայտությունը, որը NASB-ի կողմից թարգմանված է «ամբողջ օրը», եբրայերեն *'olam* բառն է: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ ('*olam*):

119:98 Աստծո հայտնության գիտությունը հավատարիմ հետևորդին դարձնում է ավելի իմաստուն, քան՝

1. նրա թշնամիներն են, Սաղմ. 119:98
2. նրա ուսուցիչներն են, Սաղմ. 119:99
3. ծերերն են (այսինքն՝ փորձառուները), Սաղմ. 119:100

119:100 Ուշադրություն դարձրե՛ք, որ իմաստությունը պարզապես գիտելիք չէ, այլ հնազանդության ապրելակերպ (տես՝ Սաղմ. 119:100բ): Այս հնազանդությունը նկարագրվում է որպես՝

1. ամեն չար ճանապարհներից ոտքերը ետ պահել (տես՝ Սաղմ. 1:1, 5:8, 16:11, 139:24, Առակ. 1:15, 4:14):

2. Քո չեղվել Քո դատաստաններից (Աստծո հայտնված ճանապարհից չմոլորվելու համար դարձվածք, տես՝ 2 Օրինաց 17:20, Հեսու 23:6):
Եկեղեցու առաջին անունը եղել է «Ճանապարհը» (տես՝ Գործք 9:2, 18:25, 26, 19:9, 23, 22:4, 24:14, 22):

119:101բ «որպեսզի պահեն Քո խոսքը» Սա կարևոր աստվածաբանական ճշմարտություն է: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՀԵԼ:

119:102բ Սաղմոս 119-ում Աստված և Նրա հայտնությունը միաձուլված են: Նրան ճանաչելը նույն է ինչ Նրա խոսքը ճանաչելը՝ իմանալը: Աստված է հայտնության ուսուցիչն ու բովանդակությունը: Սաղմոսերգուի կողմից Աստծուն խնդրանք, որ իրեն սովորեցնի կարելի է գտնել հետևյալ համարներում՝ Սաղմ. 119:12, 26, 33, 64, 108, 124, 135, 171:

119:103 Այս համարը պատկերում է Սաղմ. 19:10բ, սակայն «քաղցր» (BDB 576, KB 594, *Niphal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, բառացի՝ «հարթ», որը ՀԿ-ում գտնվում է միայն այստեղ) բառի փոխարեն մեկ այլ բառով: «Քաղց՝ քաղցրություն» դարձվածքը միջոց է, որով նկարագրվում է, թե ինչպես են Աստծո ուսմունքները կյանքը դարձնում հանելի և խաղաղ:

119:104 Ճշմարտության, կյանքի և ուրախության միայն մեկ ճիշտ աղբյուր գոյություն ունի՝ ՅԱՀՎԵՆ: Նրան ճանաչել նշանակում է ազդեցվորեն մերժել (բառացի՝ «ատել») բոլոր մյուս ճանապարհները (այսինքն՝ Սաղմ. 119:53, 128, 163, Առակ. 13:5, Ամոս 5:15):

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 119:105-112 (Նուն)

¹⁰⁵Քո խոսքը ճրագ է իմ ոտքերին ու լույս՝ շավիղներին:

¹⁰⁶Երդվեցի ու որոշում կայացրի,
Թե պիտի պահեն Քո արդար դատաստանները:

¹⁰⁷Ես խիստ վշտացած եմ, ո՛վ ՏԵՐ,
Կենդանացրո՛ւ ինձ Քո խոսքի համաձայն:

¹⁰⁸Աղաչում եմ, ընդունի՛ր իմ բերանի կամավոր գոհաբերությունները,
Ո՛վ ՏԵՐ, ու Քո դատաստանները սովորեցրո՛ւ ինձ:

¹⁰⁹Հոգիս շարունակ իմ ձեռքի մեջ է,
Բայց Քո օրենքը չեմ մոռանում:

¹¹⁰Ամբարիշտները որոգայթ լարեցին իմ դեմ,
Բայց ես Քո պատվիրաններից չեղվեցի:

¹¹¹Քո վկայությունները որպես հավիտենական ժառանգություն վերցրի,
Քանի որ դրանք իմ սրտի ցնծությունն են:

¹¹²Միրտս Քո կանոնները կատարելու համար խոնարհեցրի՝
Միշտ և մինչև վերջ:

119:105 Այս համարում ԲԱՅ չկա: Աստծո խոսքը լուսավորում է կյանքը (տես՝ Սաղմ. 43:3, Առակ. 6:23, 2 Պետ. 1:19): Կյանքը բնութագրվում է որպես արահետ, հստակ նշված ուղի, նշված Աստվածային հայտնությամբ (տես՝ Սաղմ. 89:15, Եսայի 2:5, 1 Հովհ. 1:7): Աջ կամ ձախ շեղվելը աղետ է բերում:

ՆԿ-ից գիտենք, որ Աստված մեծագույն հայտնությունը Հիսուսն է (տես՝ Հովհ. 1:1-14, Փիլիպ. 2:6-11, Կող. 1:13-16, Եբր. 1:2-3): Նա է աշխարհի լույսը (տես՝ Հովհ. 1:4, 8:12, 9:5):

119:106 Սաղմոսերգուն պնդում է, որ նա քայլում է Աստծո հայտնության ճանապարհով: ԲԱՅԻ ձևերը ենթադրում են սկզբնական որոշում և շարունակական նվիրում Աստծո հայտնությանը: Սուրբգրային հավատքը «դուռ» է (սկզբնական, անձնական հանդիպում Աստծո հետ) և «արահետ /

ճանապարհ» (շարունակական ապրելակերպ, ամենօրյա հնազանդություն): Հիսուսը սովորեցնում է սա Մատթ. 7:13-14-ում: Դա որոշում է և աշակերտություն:

Արդի հրեական կյանքում երիտասարդները սովորում են Եբրայերեն Աստվածաշունչը, և 13 տարեկանում տղաները և 12 տարեկանում՝ աղջիկները նվիրում են իրենց անձերը այդ խոսքերը պահելուն (*Bar-Mitzvah, Bat-Mitzvah*):

119:107 Վշտի բնույթը անհայտ է: Այն կարող է լինել՝

1. ամբարիշտը, Սաղմ. 119:110 (տես՝ Հոր 24:13)
2. Աստված Ինքը՝ սաղմոսերգուի անցյալի անհնազանդության համար (տես՝ Սաղմ. 119:67,71):

❖ **«կենդանացրո՛ւ ինձ»** Սա բառացի նշանակում է «կյանք տո՛ւր ինձ» (BDB 310, KB 309) և պարբերաբար կրկնվող խնդրանք է (տես՝ Սաղմ. 119:25, 37, 40, 50, 88, 93, 107, 149, 154, 156, 159, 175): Այստեղ այն հավանաբար նշանակում է ֆիզիկական կյանք, սակայն այն մարդը, ով գիտի Աստծո հայտնությունը, նա նաև գիտի, որ սա մատնացույց է անում նաև առողջ հոգևոր կյանքին: Կյանք, որը տրվում է «Բո խոսքի համաձայն»:

119:108ա Այս համարը, և սրա նման այլ համարներ, հանդիսանում են հրեա ժողովրդի կողմից ՅԱՀՎԵԻՆ խոսքերով և ոչ թե գոհերով երկրպագելու սկիզբը, քանի որ նրանք տաճարը քանդված էր (տես՝ Եսայի 57:19, Ովսեա 14:2, Եբր. 13:15):

119:108բ Հասկացողությունը անհնար է առանց Աստծո օգնության: Աստված կամենում է բացել մեր մտքերը կյանքում Իր առաջնորդության և Իր համար (տես՝ Սաղմ. 119:12, 26, 64, 66, 68, 124, 135, 171):

119:109 «**իմ կյանքը/հոգիս**» Սա եբրայերենի *nephesh* տերմինն է (BDB 659): Տե՛ս առցանց ամբողջական գրառումը Ծննդ. 35:18-ում:

- ❖ **«իմ ձեռքի մեջ»** Այս եբրայերեն դարձվածքը երկու կերպ կարելի է հասկանալ:
1. բացասական իմաստով, որտեղ «ձեռք» բառը նկատի ունի իշխանություն մեկ այլ մարդու վրա (տես՝ Դատ. 12:3, 1 Թագ. 19:5, 28:21, Հոր 13:14, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՁԵՌՔ):
 2. դրական իմաստով, որտեղ «ձեռք» բառը վերաբերում է Աստծո պահող և պաշտպանող զորությանը (այսինքն՝ Սաղմ. 31:5):

MT տալիս է «իմ ձեռքի մեջ», մինչդեռ LXX տալիս է «Բո ձեռքի մեջ»: Առաջինը ցույց է տալիս, որ Աստծո հայտնությանը հետևելը նշանակում է հակառակություն այս մեղավոր՝ ընկած աշխարհում: Երկրորդը Աստծո պահապան և հոգատար զորությունն է մատնանշում (տես՝ NJB):

119:110 Սաղմոսերգուն մեղադրվում է ուխտի որոշակի խախտման մեջ, սակայն նա հաստատում է Աստծո հայտնության հանդեպ իր ցուցաբերած հավատարմությունը՝ նվիրումը:

Սաղմ. 119:85-ի «փոս»-ի պես «որոգայթը» կենդանիների համար նախատեսված ծուղակն է, այստեղ գործածվել է որպես փոխաբերություն մարդու ազրեսիվ հարձակումների համար:

119:111-112 Աստծո հայտնությունը Իսրայելին ապացույցն էր Իր հետ նրանց հատուկ փոխաբերության: Սաղմոսերգուն հաստատում է իր հավատարմությունը և հնազանդությունը այդ հայտնությանը: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՊԱՀԵԼ:

119:111 «**դրանք իմ սրտի ցնծությունն են**» Իսրայելը ցնծում էր Աստծո հայտնությամբ (տես՝ Սաղմ. 1:2, 19:7-11): Նրանց, ովքեր ճանաչում են Աստծուն, դա բեռ չի, այլ ուրախություն (տես՝ Սաղմ. 119:14,16,24,35,47,70,77,92,143,162,174):

119:112 «հավիտյան» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ ('*olam*):

❖ «մինչև վերջ» Տես Աստծո հայտնությանը շարունակական նվիրման միևնույն դրսևորումը (Սաղմ. 119:106) Սաղմոս 119:33-ում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 119:113-120 (Մամեխ)

¹¹³Ատել եմ ունայն մտքերը, բայց Քո օրենքը սիրել եմ:

¹¹⁴Իմ թաքստոցն ու ասպարը Դու ես, Քո խոսքին հուսացի:

¹¹⁵Հեռացե՛ք ինձնից, ո՛վ չարագործներ,

Քանի որ ես պահելու եմ իմ Աստծո պատվիրանները:

¹¹⁶Պահպանի՛ր ինձ Քո խոսքի համաձայն,

Որպեսզի ապրեմ, և թող չամաչեմ իմ հույսի համար:

¹¹⁷Վե՛ր պահիր ինձ, և ես ապահով կլինեմ

Ու միշտ կհարգեմ Քո կանոնները:

¹¹⁸Ոտնակոխ արեցիր բոլոր նրանց, ովքեր շեղվեցին Քո կանոներից,

Քանի որ նրանց սուտը իրենց է մոլորեցնում:

¹¹⁹Երկրի բոլոր ամբարիշտերին հեռացնում ես որպես տականք,

Դրա համար ես սիրում եմ Քո պատվիրանները:

¹²⁰Մարմինս դողում է Քո ահից,

Ու ես վախենում եմ Քո դատաստաններից:

119:113 «Ատել եմ ունայն մտքերը / երկմիտներին» «Երկմիտներ» ԱԾԱԿԱՆԸ (BDB 704 II) հանդիպում է միայն այստեղ: JPSOA այն թարգմանում է «կես-սիրտ»: Այն կապված է 3 Թագ. 18:21-ում գտնվող ԳՈՅԱԿԱՆԻ հետ (BDB 704): Տես՝ Հակոբոս 1:8, 4:8:

Այս տունը հակադրում է երկու տեսակ անհատների՝

1. սաղմոսերգուի հալածողներին՝

ա. երկմիտները, Սաղմ. 119:113ա

բ. չարագործները, Սաղմ. 119:115

գ. նրանք, ովքեր հեռացել են Աստծո կանոներից, Սաղմ. 119:118ա

դ. խաբեբաները, Սաղմ. 119:118բ

ե. ամբարիշտները, Սաղմ. 119:119

2. Սաղմոսերգուն՝

ա. սիրում է Աստծո օրենքը, Սաղմ. 119:113բ

բ. սպասում է Աստծո խոսքին, Սաղմ. 119:114բ

գ. պահում է Աստծո պատվիրանները, Սաղմ. 119:115բ

դ. հարգում է Աստծո կանոնները, Սաղմ. 119:117բ

ե. սիրում է Աստծո վկայությունները, Սաղմ. 119:119բ

զ. վախենում է Աստծո դատաստաններից, Սաղմ. 119:120

❖ «ես սիրում եմ» Խիստ հակադրությունը ցույց է տալիս այն մեծ բացը, որը ձևավորվում է Աստծուն և Նրա հայտնությունը սիրողների և չսիրողների միջև: Չկա չեզոք տարածք:

119:114 «Դու իմ թաքստոցն ես» Այս ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 712) նկատի ունի ապաստարան:

1. խորանը/տաճարը – Սաղմ. 27:5

2. Աստված Ինքը – Սաղմ. 31:20, 32:7,10

3. Նրա թևերի ծածկույթը - Սաղմ. 61:4

4. Ամենակարողի շուքը – Սաղմ. 91:1 (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՏՎԵՐԸ ՈՐՊԵՍ ՓՈԽԱԲԵ-
ՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)

❖ «**իմ վահան/ասպար**» ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 171) անձնավորվում է որպես ՅԱՀՎԵԻ պաշտպանությունը Իր հետևորդների համար:

1. Աբրահամը – Ծննդ. 15:1
2. Իսրայելը – 2 Օրինաց 33:29, Սաղմ. 33:20, 59:11, 115:9,10
3. սաղմոսերգուն – Սաղմ. 3:3, 18:2, 28:7, 84:9
4. արդար մարդը – Սաղմ. 5:12
5. սրտով ուղիղը – Սաղմ. 7:10
6. նրանք, ովքեր ապաստան են գտնվում Նրա մեջ – Սաղմ. 18:30,35, Առակ. 30:5
7. նրանք, որ շիտակ են քայլում – Սաղմ. 84:11, Առակ. 2:7
8. Նրանից վախեցողները – Սաղմ. 115:11
9. Նրա թագավորը – Սաղմ. 144:2

❖ «**Քո խոսքին հուսացի/սպասեցի**» ԲԱՅԸ (BDB 403, KB 407, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ) արտահայտում է հույս և համբերատար վստահություն, որ Աստված կկատարի Իր խոստումները (տես՝ Սաղմ. 31:24, 33:18,22, 69:3, 119:43, 49, 74, 81, 114, 147):

119:115-117 Այս տողերը բոլորը սկսում են մի ՀՐԱՄԱՅԱԿԱՆՈՎ (այսինքն՝ աղոթքի խնդրանք): Բոլոր արմատները սկսվում են *սամեխ* տառով:

1. հեռացե՛ք ինձնից, ո՛վ չարագործներ – BDB 693, KB 747, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. պահպանի՛ր ինձ Քո խոսքի համաձայն – BDB 701, KB 759, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. վե՛ր պահիր ինձ – BDB 703, KB 761, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Ուշադրություն դարձրե՛ք, թե ինչպես է երկրորդ տողը տալիս ցանկալի արդյունքը՝

1. քանի որ պահելու եմ իմ Աստծո պատվիրանները – *Qal* ԸՂՁԱԿԱՆ
2. որպեսզի ապրեմ – *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով
3. որ ես ապահով լինեմ – *Niphal* ԸՂՁԱԿԱՆ (Սաղմ. 119:117ա)
4. ու միշտ կհարգեմ Քո կանոնները (Սաղմ. 119:117բ)

119:118 Այս համարը ակնարկում է կռապաշտությունը (տես՝ Եսայի 28:15, Երեմ. 10:14, 51:17), ոչ թե միայն ուխտի անհնազանդությունը:

«Մերժել» (հայերենում՝ «ոտնակոխ անել») (BDB 699, KB 756) գտնվում է միայն այստեղ և Ողբ 1:15-ում: Սա հազվադեպ տերմինի մեկ այլ օրինակ է, որը ընտրված է համապատասխանելու ակրոստիկոսի ձևաչափին:

119:119-120 Ուշադրություն դարձրեք, որ «սիրում եմ» (տես՝ 2 Օր. 6:4-6) և «վախենում եմ» (Սաղմ. 119:120) համատեղվում են: Տիեզերքի կողմից Աստծուն արժանի հարգանքի տուրք գոյություն ունի (այսինքն՝ NIDOTTE, հատոր՝ 2, էջ՝ 529), որը նաև տիեզերքի Փրկիչն է, որը նաև տիեզերքի Դատավորն է:

«Դողալ» (BDB 702, KB 760, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) տերմինը գտնվում է միայն այստեղ և *Piel* տեսքով միայն Հոր 4:15-ում: Դրա հետ առնչվող ձևաչափը (այսինքն՝ այլ ձայնավորներով) գտնվում է միայն Երեմ. 51:27-ում: Սա մեկ ուրիշ հազվադեպ բառ է, որը համապատասխանում էր ակրոստիկոսի ձևաչափին:

119:119

NASB

NKJV

NRSV

NJB

JPSOA

LXX

«Դու հեռացնում ես ամբարիշտներին»

«Դու դեն ես նետում բոլոր ամբարիշտներին»

«Բոլոր ամբարիշտներին . . . Դու աղբ ես համարում»

«բոլոր ամբարիշտները Քո աչքի առաջին ժանգի պես են»

«Դու վերացնում ես ամբարիշտներին»

«Բոլոր մեղավորներին ես համարեցի հանցավորներ»

BDB 991 և KB 1409 ունեն մի քանի առաջարկներ այս արմատի *Hiphil* ձևի համար:

1. դադարեցնելու, վերջին հասցնելու պատճառ հանդիսանալ, տես՝ Սաղմ .46:9
2. բնաջնջել, ոչնչացնել, տես՝ Սաղմ . 8:2, 119:119
3. պատճառ հանդիսանալ վերանալու համար
4. հեռացնել, տես՝ Սաղմ . 89:44
5. ձախողման տանելու

UBS Տեքստային Նախագիծը (Էջ՝ 411) տալիս է երկու տարբերակ՝

1. դու դարացրիր
2. դու համարեցիր/համարում ես

Այն գնատահում է “C” (բավականին կասկածելի) #2-ը:

Սաղմ .119:119-ի առաջին բառը «տականքն» է (BDB 691), որը գործածվում է սովորականից դուրս նշանակությամբ, որպեսզի համապատասխանի ակրոստիկոսի ձևաչափին: Խոսքը վերաբերում է մետաղների մաքրման թափոններին: Այն անօգուտ է և դեն է նետվում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 119:121-128 (Ային)

¹²¹Իրավունք ու արդարություն կատարեցի,

Ինձ մի՛ մատնիր ինձ ճնշողների ձեռքը:

¹²²Քո ծառայի բարօրության երաշխի՛քը եղիր,

Ամբարտավանները թող չճնշեն ինձ:

¹²³Իմ աչքերը նվաղեցին Քո փրկության համար

Ու Քո արդարության խոսքի համար:

¹²⁴Ողորմությանդ համաձայն վարվիր ծառայիդ հետ

Եվ Քո կանոնները սովորեցրո՛ւ ինձ:

¹²⁵Ես Քո ծառան եմ, իմաստություն տուր ինձ,

Որպեսզի ճանաչեմ Քո վկայությունները:

¹²⁶Գործելուդ ճանապարհն է, ո՛վ ՏԵՐ,

Քանի որ Քո օրենքը առ ոչինչ համարեցին:

¹²⁷Դրա համար Քո պատվիրանները ոսկուց

Ու ազնից ոսկուց ավելի են սիրում:

¹²⁸Ուստի ամեն ինչի վերաբերյալ Քո բոլոր պատվիրանները

Ճշմարիտ են համարում ու ատում են ամեն մի կեղծ ճամփա:

119:121-128 Այս տունը հետևում է ընդհանուր ձևաչափին: Սաղմոսերգուն իրեն նկարագրում է իր հակառակվողների հետ հակադրության մեջ:

1) սաղմոսերգուն

ա. նա իրավունք է կատարել (BDB 1048), Սաղմ . 119:121

բ. նա արդարություն է կատարել (BDB 841), Սաղմ . 119:121

գ. նրա աչքերը նվաղել են Աստծո փրկության համար, Սաղմ . 119:123ա

դ. նրա աչքերը նվաղել են Աստծո արդարության խոսքի համար, Սաղմ . 119:123բ

ե. նա Աստծո ծառան է, Սաղմ . 119:122, 124, 125

զ. նա սիրում է Աստծո պատվիրանները, Սաղմ . 119:127

է. նա գնահատում է Աստծո բոլոր հայտնությունները, Սաղմ . 119:128ա

ը. նա ատում է ամեն մի կեղծ ճամփա, Սաղմ . 119:128բ (տես՝ Սաղմ . 31:6, 119:104, 163, Առակ . 13:5):

2) նրա հակառակորդները բնութագրվում են որպես՝

ա. ինձ ճնշողները (BDB 798, KB 897, *Qal* ԴԵՐԲԱՅ), Սաղմ . 119:121բ

բ. ամբարտավան, Սաղմ . 119:122բ (տես՝ Սաղմ . 119:21,51,69,78,85)

գ. նրանք խախտում են Աստծո օրենքը, Սաղմ . 119:126բ

դ. նրանք սիրում են կեղծ ճամփան (ենթադրվում է), Սաղմ . 119:128բ

119:121 «իրավունք» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԱՏԱՎՈՐ, ԴԱՏԱՍՏԱՆ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

❖ **«արդարություն»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

119:122 Սա հինգ աղոթքի խնդրանքներից առաջինն է՝

- 1) Քո ծառայի բարօրության երաշխիքը եղիր, Սաղմ. 119:122ա – BDB 786, KB 876, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (բառացի՝ «գրավ տուր»), տես՝ Հոբ 17:3, Եսայի 38:14
- 2) թույլ մի՛ տուր, որ ամբարտավանները (BDB 267) ճնշեն ինձ, Սաղմ. 119:122բ – BDB 798, KB 897, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով: *Qal* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅԸ կիրառվում է Սաղմ. 119:121-ում՝ նկարագրելու նրա թշնամիներին:
- 3) ողորմությանդ համաձայն վարվիր ծառայիդ հետ, Սաղմ. 119:124ա – BDB 793, KB 889, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ: ՅԱՀՎԵԻ *hesed* (BDB 338) պարբերաբար կրկնվող թեմա է, տես՝ Սաղմ. 51:1, 106:45, 109:26, 119:88, 149, 159:
- 4) սովորեցրու ինձ Քո կանոնները, Սաղմ. 119:124բ – BDB 540, KB 531, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, սա մեկ այլ պարբերաբար կրկնվող թեմա է, տես՝ Սաղմ. 119:12, 26, 64, 108, 135, 171:
- 5) իմաստություն տուր ինձ, Սաղմ. 119:125ա – BDB 106, KB 122, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, սա մեկ այլ պարբերաբար կրկնվող թեմա է, տես՝ Հոբ 32:8, Սաղմ. 119:27, 34, 73, 125, 130, 144, 169:

❖ **«բարիքի / բարօրության համար»** Հնարավոր է, որ Դավուդը ճիշտ է (տես՝ AB, հատոր՝ 17Ա, էջ՝ 187), որ *Lameth* «բարօրությունից» առաջ (BDB 373 II) կարող է մատնանշել ՉԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ (այսինքն՝ Ո՛վ Բարի), ինչպես որ Սաղմ. 119:126-ում է ՅԱՀՎԵԻՑ առաջ՝ թարգմանված «Ո՛վ ՏԵՐ»:

❖ NASB Սերտողության Աստվածաշունչը (էջ՝ 869) հետաքրքիր դիտարկում է կատարում, հետևելով հրեական Մագորեթիկ գրառումներին, որ Սաղմ. 119:122 միակ համարն է Սաղմոս 119-ում, որտեղ չկա ուղղակի և անուղղակի (այսինքն՝ Սաղմ. 119:90, 121, 132) անդրադարձ Աստծո հայտնությանը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԱՍՏԾՈՒ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ): Սակայն, Դավուդը AB-ում (էջ՝ 193) հաստատում է, որ 119:37, 90, 121, 122, 132 և 149 չունեն հատուկ բառ Աստծո հայտնության համար:

119:123 Փրկությունը սովորաբար վերաբերում է ֆիզիկական ազատագրմանը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿՈՒԹՅՈՒՆ (ՀՎ-ՅԱՆ ՏԵՐՄԻՆ)), սակայն այստեղ այստեղ հաջորդ տողը ենթադրում է Աստծո բոլոր խոստումների իրականացման համար փափագ (նկատի ունենալով ազգային և նույնիսկ էսկատոլոգիական խոստումները):

119:124 «ողորմություն» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ:

119:125 «որպեսզի ճանաչեմ» Այս համատեքստում «ճանաչել» (BDB 393, KB 390, *Qal* ԸՂԶԱԿԱՆ) անշուշտ վերաբերում է ընթրմանը՝ հասկացողությանը: Սակայն եբրայերեն ԲԱՅԸ հաճախ մատնանշում է անձնական փոխհարաբերության տարր:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՃԱՆԱԶԵԼ

119:126 «Գործելու ժամանակն է, ո՛վ ՏԵՐ» Հավատարիմ հետևորդները Աստծո խոսքը և խոստումները լուրջ են ընդունում: Նրանք տեսնում են չարը և քառը ստեղծագործության մեջ և փափագով ցանկանում են, որ Աստված միջամտի մարդկության պատմության մեջ և իրականացնի Իր ամբողջ խոսքը (տես՝ Հոմ. 8:18-25):

119:127 Սա ինձ հիշեցնում է Սաղմ. 19:10 (տես՝ Սաղմ. 119:103): Ո՛հ, ինչքան սքանչելի է Աստծո ինքնաբացահայտումը՝ հայտնությամբ: Նա հավատացյալներին չի թողել այս ընկած՝ մեղավոր աշխարհի անհույս հարաբերականության մեջ: Նա Իր կամքը և ճանապարհը փոխանցել է մեզ, որպեսզի անգամ հիմա Նրա հետ ունենանք և պահպանենք մտերիմ փոխհարաբերություն:

119:128 Սա հավատարիմ հետևորդների աշխարհայացքն է: Հավատացյալները անշուշտ չեն հասկանում Աստծո ամբողջ հայտնությունը, սակայն վստահում են Աստծուն: Սա ճիշտ այն մարդկանց հակառակն է, ովքեր՝

- 1) ընտրում են Նրա հայտնություններից մի քանիսը, բայց ոչ բոլորը (տես՝ Սաղմ. 119:113)
- 2) ընտրում են այլ աստվածների (այսինքն՝ կռապաշտությունը, տես՝ Սաղմ. 31:6, 119:104, Երեմ. 10:3)

Մի քանի հարցեր կան Սաղմ. 119:128-ի շուրջ՝

1. Ինչո՞ւ է այն սկսվում «ուստի» բառով, երբ այն տրամաբանորեն կապված չէ Սաղմ. 119:127-ի հետ: Հավանաբար որպեսզի համապատասխանի ակրոստիկոսի ձևաչափին (119:127 նույնպես սկսում է «ուստի» բառով ակրոստիկոսի նպատակով):
2. Ինչո՞ւ է կրկնվում «բոլոր» բառի կիրառությունը:
3. Ինչո՞ւ է ʾִשׁׁוֹ ʾֵלֵּל (BDB 448, KB 449, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱԲ), որը սովորաբար թարգմանվում է «հարթ լինել», «շիտակ լինել» կամ «ճիշտ լինել»: Հավանաբար այն մատնանշում է ճիշտ ճանապարհը (այսինքն՝ «արդար» ինչպես չափման փայտիկը՝ եղեգը, տես՝ Առակ. 3:6) ի հակադրություն «սխալ ճանապարհի»:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 119:129-136 (ՓԷ)

¹²⁹Քո վկայությունները հիանալի են,
Դրա համար իմ անձը պահում է դրանք:
¹³⁰Քո խոսքերի հայտնությունը լույս է տալիս
Ու պարզամիտներին իմաստուն է դարձնում:
¹³¹Բերանս բացեցի ու հառաչեցի,
Քանի որ խիստ փափագում էի Քո պատվիրաններին:
¹³²Նայի՛ր ինձ ու ողորմած եղի՛ր իմ նկատմամբ,
Ինչպես միշտ վարվում ես Քո անունը սիրողների հետ:
¹³³Իմ քայլերն ուղղի՛ր Քո խոսքի մեջ,
Թող ոչ մի անօրենություն չտիրի՛ ինձ:
¹³⁴Ազատի՛ր ինձ մարդկանց բռնությունից,
Եվ կպահեմ Քո պատվիրանները:
¹³⁵Փայլեցրու երեսդ Քո ծառայի վրա
Ու սովորեցրո՛ւ ինձ Քո պատվիրանները:
¹³⁶Չրերի վտակներ են հոսում իմ աչքերից,
Որովհետև Քո օրենքը չեն պահում:

119:129 «հիանալի» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՔԱՆՉԵԼԻ ԲԱՆԵՐ:

❖ «անձը» Սա *nephesh* (BDB 659) բառն է, որը նկատի ունի մարդու կյանքը: Ամբողջական գրառումը տես Ծննդ. 35:18-ում առցանց տարբերակով:

❖ «պահում է դրանք» Սա պարբերաբար կրկնվող շեշտադրություն է (տես՝ Սաղմ. 119:2, 22, 33, 34, 56, 69, 100, 115, 129, 145, 168, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՀԵԼ): Սուրբգրային հավատքը պարզապես լույս չի, այլ լույսի մեջ քայլել (տես՝ Սաղմ. 89:15, 119:105, Առակ. 6:23, Եսայի 2:5, 1 Հովի . 1:5-7):

Ուշադրություն դարձրե՛ք միևնույն շեշտադրությանը հնագանդության վրա Սաղմ. 119:134-ում՝ «ճանաչել» *Qal* ԸՂԶԱԿԱՆ (BDB 1036, KB 1581):

119:130 «բացահայտումը/հայտնությունը» Սա միակն կիրառությունն է այս բառի (BDB 836) ՀԿ-ում: Դարձյալ կիրառվել է հազվադեպ բառ, որպեսզի համապատասխանի ակրոստիկոսի ձևաչափին:

❖ **«պարզամիտներ»** Այս բառը (BDB 834) կարող է ունենալ բացասական (այսինքն՝ Առակ. 1:2) կամ դրական նշանակություն: Այստեղ դրական է: Աստված ցանկանում է, որ բոլոր մարդիկ ճանաչեն Իրեն և Իր կամքը: Այստեղ այն մատնանշում է ուսանելի մարդու (տես՝ Սաղմ. 19:7), սակայն մեկը, որ ինչ-որ պատճառով, չի ճանաչում Աստծո հայտնությունը:

119:131 Սրանք երեք դարձվածքներ են ուժգին ցանկության համար:

1. բացված բերան – Հոբ 29:23
2. նվաղել – Սաղմ. 42:1
3. փափագել – Սաղմ. 119:20

Վերջին բառը (BDB 383) ՀԿ-ում միայն այստեղ է գտնվում:

119:132-135 Այստեղ առկա է ՀՐԱՄԱՅԱԿԱՆ աղոթքի խնդրանքների շարք՝

1. նայի՛ր ինձ / վերադարձի՛ր ինձ – BDB 815, KB 937, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 25:16, 69:16
2. ողորմա՛ծ եղիր իմ հանդեպ – BDB 335, KB 334, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. իմ քայլերն ուղղիր – BDB 465, KB 464, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
4. ազատի՛ր ինձ – BDB 804, KB 911, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿԱԳԻՆ, ՓՐԿԱԳՆԵԼ)
5. փայլեցրո՛ւ երեսդ **Քո ծառայի վրա** – BDB 21, KB 24, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
6. սովորեցրո՛ւ ինձ – BDB 540, KB 531, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Եվս մեկ խնդրանք կա, որը սահմանված է ժխտական իմաստով (այսինքն՝ «թող ո՛չ մի անօրենություն չտիրի ինձ», տես՝ Սաղմ. 19:13, սակայն մեկ այլ ԲԱՅՈՎ): Սա *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ Է՛ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, Սաղմ. 119:133բ:

119:132բ Աստծո հավատարիմ հետևորդների ինչպիսի՛ գեղեցիկ նկարագրություն է (տես՝ Սաղմ. 5:11, 69:36, Եսայի 56:6):

Անունը ներկայացնում է հենց Աստծուն: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵ «ԱՆՈՒՆԸ»

119:133 «Իմ քայլերն ուղղիր» Սա մաքուր, հարթ, անխոչընդոտ ճանապարհի նկարագրություն է (տես՝ Սաղմ. 17:5), որը հնարավոր է Աստծո հայտնության, գործողությունների և ծոստումների միջոցով (այսինքն՝ Եսայի 40:3-4):

119:135 «Փայլեցրո՛ւ երեսդ Քո ծառայի վրա» Սա ակնարկ է Թվոց 6:24-26-ի Ահարոնի օրհնությանը: Սաղմոսաց գրքում այն մի քանի անգամ ակնարկվում է (տես՝ Սաղմ. 4:6, 31:16, 67:1, 80:3,7,19 և այստեղ):

Հակառակ դարձվածքը կլիներ, որ ՅԱՀՎԵՆ ծածկեր Իր երեսը (տես՝ Սաղմ. 10:11, 13:1, 22:24, 27:9, 44:24, 69:17, 88:15, 102:2, 104:29, 143:7, Եսայի 57:17):

119:136 Սա կարևոր համար է, քանի որ Աստծո օրենքը չպահողներին ուղղված հղումների մեծամասնությունը դատաստան են պահանջում (այսինքն՝ Սաղմ. 119:53, 158): Այս մեկը ցույց է տալիս սաղմոսերգուի վիշտը և բարեխոսությունը մոլորվածների համար:

Մեկը կարող է հարցնել, թե արդյո՞ք սաղմոսերգուն մտածում է իր անձնական թշնամիների մասին, թե հավաքական Իսրայելի մեղքերի մասին (տես՝ Երեմ. 9:1, 18, 14:17, Ողբ 3:48):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 119:137-144 (Ցաղե)

¹³⁷Արդար ես Դու, ո՛վ ՏԵՐ,

Եվ Քո դատաստանները ճիշտ են:

¹³⁸Քո պատվիրած վկայությունները արդար են ու խիստ ճշմարիտ:

¹³⁹Իմ նախանձախնդրությունն ինձ մաշեցրեց,

Քանի որ իմ թշնամիները մոռացան Քո խոսքերը:

¹⁴⁰Քո խոսքը խիստ մաքուր է,

Դրա համար Քո ծառան սիրում է այն:

¹⁴¹Ես փոքր ու արհամարհված եմ,

Բայց չեմ մոռացել Քո կանոնները:

¹⁴²Քո արդարությունը հավերժական արդարություն է,

Իսկ Քո օրենքը՝ ճշմարտություն:

¹⁴³Նեղությունն ու վիշտն ինձ պատեցին,

Բայց Քո պատվիրաններն իմ ուրախությունն են:

¹⁴⁴Քո վկայությունների արդարությունը հավիտենական է.

Հասկացողությունն տուր ինձ, ու ես կապրեմ:

119:137-144 Այս տունը հակադրում է ՅԱՀՎԵԻ և/կամ Իր հայտնությունների հատկանիշները սաղմոսերգուի ներկա իրավիճակների հետ:

1. ՅԱՀՎԵՆ/Իր հայտնությունները նկարագրվում են որպես՝

ա. արդար

1) ԱԾԱԿԱՆ (BDB 843), Սաղմ. 119:137

2) ԳՈՅԱԿԱՆ (ԱՐԱԿԱՆ ՍԵՌԻ, BDB 841), Սաղմ. 119:138, 144 (ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ, BDB 842, Սաղմ. 119:142)

բ. ուղիղ (BDB 449), Սաղմ. 119:137

գ. հավատարիմ (ՄԱԿԲԱՅ, BDB 547), Սաղմ. 119:138, տես՝ Սաղմ. 119:86

դ. մաքուր (BDB 864, KB 1057, *Qal* ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ), Սաղմ. 119:140

ե. հավիտենական (BDB 761), Սաղմ. 119:142,144

զ. ճշմարտություն (BDB 54), Սաղմ. 119:142

4. սաղմոսերգուն՝

ա. նա Աստծո հայտնության համար նախանձախնդրություն ունի (կամ իր թշնամիներին հակառակ), սակայն իր ախոյանները մոռացել են դրանք, Սաղմ. 119:139

բ. նա սիրում է Աստծո հայտնությունը, Սաղմ. 119:140

գ. նա փոքր է և արհամարհված, սակայն չի մոռանում Աստծո հայտնությունը, Սաղմ. 119:141

դ. նեղություն և վիշտ են պատել նրան, սակայն նա Աստծո հայտնությամբ է ուրախանում, Սաղմ. 119:143:

119:137 «ՏԵՐ» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ

119:139 Այս համատեքստում թվում է, թե սաղմոսերգուի «նախանձախնդրությունը» (BDB 888) ուղղված է ոչ թե դրական առումով դեպի Աստծո խոսքը, այլ նրանց դեմ, ովքեր մոռացել են Նրա խոսքը (տես՝ Սաղմ. 69:9, 119:53): Սա Սաղմ. 119:136-ի հակառակն է:

119:140

NASB, NKJV

NRSV, LXX

TEV

NJB, REB

«շատ մաքուր»

«լավ փորձված»

«հաստատ»

«լավ ստուգված»

JPSOA

«չափազանց մաքուր»

ԲԱՅԸ (BDB 864, KB 1057, *Qal* ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ) մատնանշում է այն, ինչը մաքրվել՝ գտվել է կրակով և մնացորդը հեռացվել է միայն թողնելով մաքուր մետաղը:

119:141

NASB, NKJV, NRSV, Peshitta

TEV

NJB

JPSOA

LXX

REB

«փոքր»

«անկարևոր»

«թշվառ»

«նվազ»

«երիտասարդ»

«փոքր համարում ունեցող»

Հարցն այն է, թե արդյո՞ք այս բառը (BDB 859 I) նկատի ունի՝

1. տարիք (տես՝ Ծննդ. 43:33, 48:14, Դատ. 6:15, Սաղմ. 68:27)
2. ֆիզիկական չափ (տես՝ 1 Թագ. 9:21, Ես. 60:22, Երեմ. 48:4, 49:20, 50:45)
3. սոցիալական հեղինակություն (տես՝ Միքիա 5:2, և այստեղ)

❖ Սա ՀԿ-ի դերի հակադարձված դասական օրինակ է: Հավատարիմ սաղմոսերգուն կոչվում է «արհամարհված» (BDB 102, KB 117, *Niphal* ԴԵՐԲԱՅ), երբ պետք է այդպես կոչվեին այն մարդիկ, ովքեր գիտակցաբար մոռանում՝ արհամարհում են Աստծո հայտնությունը: Արտաքին հանգամանքները (տես՝ Սաղմ. 119:143) այս ընկած աշխարհում չեն արտացոլում Աստծո այն գնահատականը, որը մի օր անդրադառնալու է շիտակ հաշվետվությանը:

119:142 «ճշմարտություն» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼԸ, ՎԱՏԱՎԵԼԸ, ՀԱՎԱՏՔԸ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԿ-ՈՒՄ

119:143 Սա այն բանի առեղծվածն է, թե ինչու են արդարները չարչարվում (տես՝ Հոբ, Սաղմոս 73): Սաղմոսերգուն պահում, սիրում, և գործում է Աստծո հայտնությամբ, այնուհանդերձ նա չարչարվում է անաստվածների և անկում ապրած այս դարի իրավիճակների ձեռքից (այսինքն՝ հիվանդություն, սոցիալական անարդարություն, և այլն):

119:144 Միակ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ աղոթքի խնդրանքը այս տան մեջ Սաղմ. 119:144-ն է (տես՝ 119:27, 125): Նկատե՛ք, որ հասկացողության արդյունքը պետք է լինի աստվածահան կյանքը (BDB 310, KB 309, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով):

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 119:145-152 (Քոֆ)

¹⁴⁵Ամբողջ սրտով *Քեզ* կանչեցի, լսի՛ր ինձ, ո՛վ ՏԵՐ .
Ես Քո կանոններն են պահելու:
¹⁴⁶*Քեզ* աղաղակեցի, փրկի՛ր ինձ,
Ես Քո վկայություններն են պահելու:
¹⁴⁷Լուսաբացից առաջ արթնացա ու *Քեզ* կանչեցի,
Ես Քո խոսքին հուսացի:
¹⁴⁸Գիշերվա պահից առաջ բացվեցին իմ աչքերը՝
Քո խոսքերի մասին խորհրդածելու համար:
¹⁴⁹Իմ ձայնը լսի՛ր Քո գթասիրության համաձայն, ո՛վ ՏԵՐ,
Եստ Քո դատաստանի կենդանացրո՛ւ ինձ:
¹⁵⁰Չարիք ծրագրողները մոտենում են .
Նրանք հեռացել են Քո օրենքից:
¹⁵¹Դու մոտ ես, ո՛վ ՏԵՐ, ու Քո բոլոր պատվիրանները ճշմարտություն են:
¹⁵²Սկզբից ևեթ գիտեի Քո վկայությունների մասին,
Որ Դու հավիտենապես ես հաստատել դրանք:

119:145-152 Ինչպես այս ակրոստիկոս պարբերություններում ընդունված է, սաղմոսերգուն համեմատում է իր գործողությունները և մտքերը իրեն հալածողների հետ՝

1. սաղմոսերգուն՝

ա. ես ամբողջ սրտով կանչեցի, Սաղմ. 119:145ա

բ. ես կյահեմ Քո կանոնները, Սաղմ. 119:145բ

գ. ես Քեզ կանչեցի, Սաղմ. 119:146ա

դ. ես պահելու եմ Քո վկայությունները, Սաղմ. 119:146բ

ե. լուսաբացից առաջ արթնացա ու Քեզ կանչեցի, Սաղմ. 119:147ա

զ. ես Քո խոսքին հուսացի, Սաղմ. 119:147բ

է. Քո խոսքերի մասին խորհրդածելու համար, Սաղմ. 119:148բ

ը. Սկզբից և եթ զիտեի Քո վկայությունների մասին, Սաղմ. 119:152ա

2. նրա հալածողները՝

ա. չարիք ծրագրողները մոտենում են, Սաղմ. 119:150ա

բ. նրանք հեռացել են Քո օրենքից, Սաղմ. 119:150բ

❖ Այս համեմատության լույսի ներքո սաղմոսերգուն չորս աղոթքի խնդրանքն է ներկայացնում՝

1. պատասխանիր ինձ, Սաղմ. 119:145ա – BDB 772, KB 851, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

2. փրկիր ինձ, Սաղմ. 119:146ա – BDB 446, KB 448, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

3. լսիր իմ ձայնը, Սաղմ. 119:149ա – BDB 1033, KB 1570, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

4. կենդանացրու ինձ, Սաղմ. 119:149բ – BDB 310, KB 309, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Սա հավելյալ ենթադրվող աղոթքի խնդրանք է Սաղմ. 119:151ա-ում: Երբ ամբարիշտը մոտենում է նրան, նա հաստատում է, որ ՅԱՀՎԵԻՆ մոտ է, Սաղմ. 119:151: Այն հայտարարություն է (առանց ԲԱՅԻ), սակայն նաև աղոթք:

119:145 «իմ ամբողջ սրտով» Սա կարելի է հասկանալ երկու իմաստով՝

1. իմ ամբողջ էությանը (Սաղմ. 103:1-ում նմանօրինակ դարձվածք, «այս բոլորը իմ ներսում է»)՝

2. հաստատում է, որ ինքը «չի երկմտում» (տես՝ Սաղմ. 119:113) կամ կես սրտով հետևողը չէ (հակադրում է Դավթին՝ ամբողջ սրտով, Սողոմոնի հետ՝ իր ծերության օրերում կես-սրտով):

❖ «Ո՛վ ՏԵՐ» Գոյություն ունեն երեք ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, որոնք այս տան մեջ անդրադառնում են ՅԱՀՎԵԻՆ (Սաղմ. 119:145, 149, 151): «ՅԱՀՎԵ» անվան համար տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ

119:148 Սաղմոսերգուն չի կարողանում քնել՝

1. անհավատ իսրայելացիների (հավանաբար կռապաշտները) հարձակումների պատճառով

2. իր ամբողջ սրտով Աստծո հայտնությանը նվիրման պատճառով

119:149 Սաղմոսերգուն խնդրում է ՅԱՀՎԵԻՆ, որ գործի իր համար՝

1. Նրա ողորմած բնավորության պատճառով

2. Նրա հայտնության պատճառով (այսինքն՝ Սուրբ Գիրքը)

3. ամբարիշտների հիմարության պատճառով (այսինքն՝ այս անարդար և ընկած դարի)

119:152 «սկզբից և եթ» Սա կարող է նկատի ունենալ՝

1. Աստծո հին գործերը (տես՝ Սաղմ. 24:2, 78:69, 89:11, 102:25, 104:5) և հայտնությունները՝ Նահապետների համար

2. սաղմոսերգուի կողմից Աստծուն և Նրա հայտնությունը ճանաչելու և վստահելու երկար պատմությունը:

❖ «**հավիտյան**» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՀԱՎԻՏՅԱՆ ('olam):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 119:153-160 (ԲԷԶ)

¹⁵³Իմ տառապանքին նայի՛ր ու փրկի՛ր ինձ,

Քանի որ չմոռացա Քո օրենքը:

¹⁵⁴Իմ իրավունքը պաշտպանի՛ր ու ազատի՛ր ինձ,

Քո խոսքի համաձայն կենդանացրո՛ւ ինձ:

¹⁵⁵Փրկությունը հեռու է ամբարիշտներից,

Քանի որ չփնտրեցին Քո կանոնները:

¹⁵⁶Մեծ է Քո գթասիրությունը, ո՛վ ՏԵՐ,

Քո դատաստանների համաձայն կենդանացրո՛ւ ինձ:

¹⁵⁷Շատ են ինձ հալածողներն ու թշնամիները,

Բայց ես Քո վկայություններից չեղվեցի:

¹⁵⁸Տեսա օրինազանցներին ու վշտացա,

Քանի որ նրանք Քո խոսքը չէին պահում:

¹⁵⁹Տե՛ս, թե որքա՛ն եմ սիրում Քո օրենքները, ո՛վ ՏԵՐ,

Քո ողորմության համաձայն կենդանացրո՛ւ ինձ:

¹⁶⁰Քո խոսքն ամբողջապես ճշմարտություն է,

Ու Քո արդար դատաստաններից ամեն մեկը հավիտենական է:

119:153-160 Այստեղ տրված է մի շարք (8) ՀՐԱՄԱՅԱԿԱՆ աղոթքի խնդրանքներ՝ հիմնված Աստծո բնավորության (տես՝ Սաղմոս 119:156ա) և սաղմոսերգուի կողմից Աստծո հայտնության հնազանդության վրա: Մա ուխտի բնույթն է (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՈՒԽՏ):

1. նայի՛ր, Սաղմ. 119:153, 159 – BDB 906, KB 1157, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. նույնը ինչ #1
3. փրկի՛ր ինձ, Սաղմ. 119:153 – BDB 322, KB 321, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
4. իմ իրավունքը պաշտպանի՛ր, Սաղմ. 119:154 – BDB 936, KB 1224, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 35:23-24, 43:1
5. ազատի՛ր ինձ, Սաղմ. 119:154 – BDB 322, KB 321, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
6. կենդանացրո՛ւ ինձ, Սաղմ. 119:154, 156, 159 – BDB 310, KB 309, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
7. նույնը ինչ #6
8. նույնը ինչ #6

119:153 «Իմ տառապանքը» Տառապանքի ստույգ բնույթը երբեք չի նշվում, սակայն երկու հիմնական հավանական տարբերակներ կան՝

1. Աստծուց ուղարկված խնդիրներ և հակառակություններ (տես՝ Սաղմ. 119:67, 71)
2. անձնական թշնամիներ (սա ավելի շատ է համապատասխանում այս համատեքստին) ա. ամբարիշտները, Սաղմ. 119:155
բ. նրանք չեն փնտրում Քո կանոնները, Սաղմ. 119:155
գ. ինձ հալածողները, Սաղմ. 119:157
դ. իմ հակառակորդները, Սաղմ. 119:157
ե. օրինազանցները, Սաղմ. 119:158
զ. նրանք, ովքեր չեն պահում Աստծո հայտնությունը, Սաղմ. 119:158

❖ **«քանի որ չմոռացա Քո օրենքը»** Հիշե՛ք, որ Սաղմոսները գրվել են գործերի վրա հիմնված մով սիսական ուխտի աստվածաբանական մտայնության ժամանակ (տես՝ Սաղմ. 119:154, բ, 156բ, 159բ): Սաղմոսերգուն ընդգծում է իր հավատարմությունը:

1. ես չեմ մոռանում Քո օրենքը, Սաղմ. 119:153, տես՝ Սաղմ. 119:83, 109, 141
2. նրանք չեն փնտրում Քո կանոնները, իսկ ես փնտրում եմ (ենթադրվում է), Սաղմ. 119:155
3. ես Քո վկայություններից չեմ շեղվում, Սաղմ. 119:157

4. նրանք չեն պահում Քո խոսքը, իսկ ես պահում եմ (ենթադրվում է), Սաղմ. 119:158
5. ես սիրում եմ Քո կանոնները, Սաղմ. 119:159

119:154 «Իմ իրավունքը պաշտպանիր» Սա դատարանական խոսք է: Մի օր ամբողջ գիտակցական կյանքը (հրեշտակային և մարդկային) կանգնելու է Աստծո առաջ հաշիվ տալու կյանքի պարզևի համար (տես՝ Մատթ. 25:31-46, 2 Կորնթ. 5:10, Հայտն. 20:11-15): Հռոմեացիների 8:31-39 արձանագրում է այս նկարագրությունը:

1. Աստված որպես Դատավոր
2. Սատանան որպես մեղադրող փաստաբան
3. Հիսուս որպես հավատարիմ հետևորդների դատապաշտպան
4. հրեշտակները որպես հանդիսատեսներ (տես՝ 1 Կորնթ. 4:9, Եփես. 2:7, 3:10)

Այս արտահայտությունը կարող է մատնանշել նաև ՅԱՀՎԵԻՆ որպես «փրկագնող ազգական», որը դատապաշտպան է իր հարազատի համար (տես՝ Ղևտ. 25:23-28, Հռուբ 3, Հոր 19:23-27, Առակ. 23:11, Երեմ. 50:34, 51:36, Ողբ 3:58):

119:155 «Փրկություն» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿՈՒԹՅՈՒՆ (ՀԿ-ՅԱՆ ՏԵՐՄԻՆԸ)

119:156-157 Նկատե՛ք միևնույն արմատից երկու բառերը (BDB 912 I), «մեծ», Սաղմ. 119:156 և «շատ»՝ Սաղմ. 119:157:

Շատ թշնամիներ կան (տես՝ Սաղմ. 119:157), սակայն մենք ունենք մեծ Աստված (Սաղմ. 119:156): Այս նույն ճշմարտությունը արտահայտվում է 1 Պետրոսում, որտեղ մի բառը (բազմապիսի) նկարագրում է՝

1. բազմապիսի փորձությունները, 1 Պետ. 1:6
2. Աստծո բազմապիսի շնորհքը, 1 Պետ. 4:10

119:158 «Ես . . . զգվեցի նրանցից» Սա կարծես թե կոպիտ է հնչում ՆԿ-յան հավատացյալների համար: Սակայն հիշե՛ք, որ սա Մովսիսական ուխտն է: Մարդկային զգացմունքները հաճախ են սահմանվում այլաբանական նկարագրությամբ: Սաղմոսերգուի սերը Աստծո և Նրա խոսքի հանդեպ նրան ստիպում էր ազդեցիկ արձագանքել (տես՝ Սաղմ. 139:21) այն մարդկանց հանդեպ, ովքեր՝

1. մերժում են այն
2. ընտրում են միայն որոշ մասեր
3. կեղծավորություն են անում

Աստված Ինքը հայտնել է Իր վերաբերմունքը (տես՝ Սաղմ. 95:10) այն մարդկանց հանդեպ, ովքեր մերժում են Իր հայտնությունը Ղևտացիների 26 և 2 Օրինաց 27-30-ում: Նրան, ում շատ է տրված, շատ է պահանջվում (տես՝ Ղուկաս 12:48): Սաղմոսերգուի թշնամիները կարծես թե խրախուսվածներ էին:

119:160 Այս համարում ԲԱՅ չկա: NASB տալիս է երկու «լինել» ԲԱՅ:

❖ **«ամբողջապես»** Սա նշանակում է «լրիվ, ամբողջ», որը հաջորդ տողի հետ շատ ավելի լավ գուգահեռ է կազմում, քան «էությունը»:

❖ **«ճշմարտություն»** Սա այն ճշմարտությունը չէ, որը կեղծիքի հակառակն է, այլ հավատարմությունն է՝ հակադրված անհավատարմությանը: Աստծո խոսքը ճիշտ հակառակն է ընկած մարդկության խոսքի: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼԸ, ՎՍՏԱՀԵԼԸ, ՀԱՎԱՏՔԸ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԿ-ՈՒՄ:

❖ **«արդար»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

❖ **«հավիտենական»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ ('olam):

NASB (ԹՎՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 119:161-168 (Շին)

161 Իշխանները հանիրավի ինձ հալածեցին,

Բայց իմ սիրտն ակնածում է Քո խոսքից:

162 Ես հրճվում եմ Քո խոսքերով, ինչպես մեկը,

Որ մեծ ավար է գտել:

163 Ատում ու արհամարհում եմ սուտը,

Բայց Քո օրենքը սիրում եմ:

164 Օրվա մեջ յոթ անգամ փառաբանում եմ Քեզ

Քո արդար դատաստանների համար:

165 Քո օրենքը սիրողները մեծ խաղաղություն ունեն,

Ոչ մի բան չի գայթակղեցնելու նրանց:

166 Տէր, Քո փրկությանը հուսացի

Եվ Քո պատվիրանները կատարեցի:

167 Իմ անձը Քո վկայությունները պահեց,

Ու ես դրանք չափազանց շատ եմ սիրում:

168 Քո օրենքներն ու վկայությունները պահեցի,

Քանի որ իմ բոլոր ճամփաները Քո առաջ են:

119:161-168 Այս տունը առանձնահատուկ է իր ՎԱՂԱԿԱՏԱՐ ԲԱՅԵՐՈՎ, որոնք մատնանշում են ավարտուն, կատարված, վերջացած գործողություն: Սաղմոսերգուն հաստատում է, թե ինքն ինչ է դարձել Աստծո և Իր հայտնության շնորհիվ:

1. իմ սիրտն ակնածում է Քո խոսքից, Սաղմ. 119:161բ, տես՝ Սաղմ. 119:120
2. ես հրճվում եմ Քո խոսքերով, Սաղմ. 119:162ա
3. ատում ու արհամարհում եմ սուտը, Սաղմ. 119:163ա, տես՝ Սաղմ. 119:104, 118, Առակ. 13:5
4. ես սիրում եմ Քո օրենքը, Սաղմ. 119:163բ
5. օրվա մեջ յոթ անգամ փառաբանում եմ Քեզ, Սաղմ. 119:164ա
6. նրանք, որ սիրում են (այսինքն՝ որոնցից մեկն էլ սաղմոսերգուն է) Քո օրենքը, Սաղմ. 119:165ա
7. Քո փրկությանը հուսացի, Սաղմ. 119:166ա
8. Քո պատվիրանները կատարեցի, Սաղմ. 119:166բ
9. իմ անձը Քո վկայությունները պահեց, Սաղմ. 119:167ա
10. ես սիրում եմ Քո վկայությունները, Սաղմ. 119:167բ
11. Քո օրենքներն ու Քո վկայությունները պահեցի, Սաղմ. 119:168ա
12. իմ բոլոր ճամփաները Քո առաջ են, Սաղմ. 119:168բ

119:161ա «Իշխաններ» տերմինը (BDB 978) ունի լայն ստուգաբանական նշանակություն, որը ընդգրկում է քաղաքացիական, ցեղային և կրոնական առաջնորդներին (տես՝ Սաղմ. 119:23): Սաղմոս 119-ի հեղինակը այս սոցիալական դասակարգումների մեջ չէր և հաճախ հալածվում էր իշխանության վրա գտնվողների կողմից:

119:161բ Չարմանալի է, որ պոեզիայի այս տողն արտահայտում է Աստծո հայտնության հանդեպ երկուդաժություն, իսկ հաջորդ տողը խոսում է դրանում ցնձալու մասին: Չնայած այս երկու զգացմունքներն էլ ճիշտ են Սուրբ Գրքի դեպքում: Մեղավոր մարդկության համար այն բերում է վախ, հույս, խաղաղություն և ուրախություն:

JPSOA տարբերակը թարգմանում է «կանգնում է վախի մեջ» (BDB 808, KB 922, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ), երբ «իմ սիրտը հրճվում է Քո խոսքով»՝ ձևավորելով զուգահեռ Սաղմ. 119:162ա-ի հետ:

119:162բ Հարստությունը չի ասոցացվում ֆիզիկական բաների հետ, այլ Աստծո հայտնության գիտության և դրանով ապրելու պատրաստակամության հետ:

119:164 «Յոթ անգամ» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՍԻՄՎՈՒԽԿ ԹՎԵՐԸ:

119:165 Այս համարը տալիս է Աստծո հայտնություն սիրելու երկու հատուկ օգուտները՝

1. մեծ խաղաղություն (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ (shalom))
2. չեն գայթակղվելու (BDB 506)

Այս նույն ճշմարտությունն արտահայտելու մեկ այլ կերպ էլ գտնվում է Առակ .3:1-12, 13-26-ում, կիրառելով հոր ուսմունքի և իմաստության նկարագրություն: Աստծուն ճանաչելն ու հետևելը թե՛ այս և թե՛ հաջորդ կյանքի համար օգտակար է:

Հիշեք, որ «գայթակղել» բառը (BDB 506) դարձվածք է կապված Աստծո հայտնության այն հասկացողության հետ, որը հստակ նշված, հարթ, ուղիղ, և անխոչընդոտ ճանապարհ է (Սաղմ . 119:105, Առակ .6:23):

119:166 Այս համարի հույսը զուգահեռված է Սաղմ .119:174-ի «փափագել» բառով: Աստծո փրկությունը ապագա է, սակայն հաստատ է: Նա անելու է այն, ինչ խոստացել է (անհատապես և հավաքական առումով):

119:167 «պահում է» Հնազանդությունը կարևոր է թե՛ ՀԿ-ում և թե՛ ՆԿ-ում: Երեմ .31:31-34-ի Նոր Ուխտը (ՆԿ-ի ավետարանը) փոխեց մեխանիզմը, բայց ո՛չ նպատակը: Աստված ուզում է մի ժողովուրդ, որը կարտացոլի Իր բնավորությունը ազգերի համար, որպեսզի նրանք կարողանան գալ Իրեն և փրկվեն: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՀԵԼ:

ԲԱՅԸ (BDB 1036, KB 1581, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) կրկնվում է Սաղմ . 119:168-ում շեշտադրության համար:

119:168բ Այս նույն ճշմարտությունը Սաղմոս 139-ի էությունն է: Աստված ամբողջությամբ ճանաչում է Իր յուրաքանչյուր հատուկ ստեղծագործության սիրտն ու միտքը (այսինքն՝ մարդկանց, տես՝ 1 Թագ . 16:7, 3 Թագ . 8:39, 1 Մնաց . 28:9, Սաղմ . 7:9, 17:3, 66:10, Երեմ . 11:20, 17:10, 20:12, Ղուկ . 16:15, Գործք 1:24):

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 119:169-176 (Թալ)

¹⁶⁹Քո օրենքներն ու Քո վկայությունները պահեցի,

Քանի որ իմ բոլոր ճամփաները Քո առաջ են:

¹⁷⁰Թող իմ աղաչանքը Քո առջև գա .

Քո խոսքի համաձայն ազատի՛ր ինձ:

¹⁷¹Իմ շրթունքներից օրհնություն է բխելու,

Քանզի Քո կանոնները սովորեցրի՛ր ինձ:

¹⁷²Իմ լեզուն Քո խոսքն է ասելու,

Քանի որ Քո բոլոր պատվիրաններն արդար են:

¹⁷³Թող Քո ձեռքն ինձ օգնական լինի,

Քանի որ Քո պատվիրաններն ընտրեցի:

¹⁷⁴Քո փրկությանը փափագեցի, ո՛վ ՏԵՐ,

Ու Քո օրենքն իմ ուրախությունն է:

¹⁷⁵Թող իմ անձն ապրի, որ օրհնեմ Քեզ,

Եվ Քո դատաստանները թող օգնեն ինձ:

¹⁷⁶Կորած ոչխարի պես մոլորվեցի .

Փնտրի՛ր Քո ծառային, քանի որ պատվիրաններդ չեմ մոռացել:

119:169-176 Այս վերջին պարբերությունը առանձնահատուկ է իր ՀԱՅՑԱԿԱՆՆԵՐՈՎ, որոնցից երեքին հաջորդում են ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ (Սաղմ. 119:169, 170, 176):

1. թող իմ աղաղակը Քո առջև գա, Սաղմ. 119:169ա – BDB 897, KB 1132, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
2. հասկացողություն տուր ինձ, Սաղմ. 119:169բ – BDB 106, KB 122, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. թող իմ աղաչանքը Քո առջև գա, Սաղմ. 119:170ա – BDB 97, KB 112, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով. նկատել՝ Սաղմ. 119:169-ի և 170ա-ի միջև զուգահեռականությունը:
4. ազատիր ինձ, Սաղմ. 119:170բ – BDB 664, KB 717, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
5. իմ շրթունքներից օրհնություն է բխելու, Սաղմ. 119:171ա – BDB 615, KB 665, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
6. իմ լեզուն Քո խոսքն է ասելու/երգելու, Սաղմ. 119:172ա – BDB 777, KB 854, *Qal* ՀԱՅՑԱԿԱՆ
7. թող Քո ձեռքն ինձ օգնական լինի / թող իմ ձեռքը պատրաստ լինի օգնելու (անգլերենում), Սաղմ. 119:173ա – BDB 224, KB 243, *Qal* ՀԱՅՑԱԿԱՆ
8. թող իմ անձը ապրի, Սաղմ. 119:175ա – BDB 310, KB 309, *Qal* ՀԱՅՑԱԿԱՆ
9. որ օրհնեմ Քեզ, Սաղմ. 119:175ա – BDB 237, KB 248, *Piel* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
10. Քո դատաստանները թող օգնեն ինձ, Սաղմ. 119:175բ – BDB 740, KB 810, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
11. փնտրի՛ր Քո ծառային, Սաղմ. 119:176ա – BDb 134, KB 152, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Սաղմոսը ամփոփվում է աղոթքի խնդրանքների բույլով:

119:171-173 Ուշադրություն դարձրե՛ք, թե ինչպես է յուրաքանչյուր համարի երկրորդ տողը բացատրում խնդրանքի նպատակը՝ պատճառը:

119:176ա Աստծո ժողովրդի, որպես մոլորված ոչխարներ, նկարագրությունը նաև կարելի է գտնել Եսայի 53:6, Երեմ. 50:6, Եզեկ. 34:2-19, Չաք. 10:2-3-ում: Ահա այստեղ է նկարագրվում՝

1. Աստված որպես Հովիվ – Սաղմոս 23, Եզեկիել 34
2. Մեսիան որպես Հովիվ – Չաքարիա 10-11, Հովհաննես 10:1-18

Ոչխարները կարիք ունեն հաստատուն, անձնական, պաշտպանողական հոգատարության:

Սաղմոս 119:176ա-ի ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ հիշեցնում է Մատթ. 18:12-14 և Ղուկաս 15:4-7 համարները: Աստված իրապես «փնտրում է» կորած ոչխարներին: Այլուիս՝